



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

Ղ. ԲՈՂԱՏ

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 66

1899 ՅՈՒԼԻՍ 10

H. Polad, Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Turquie Constantinople

در علیہدہ بفتحہ قیوسندہ اسکی ضبطیہدہ
۱۹ نومروی دکاندہ (حاضر ایداک) «مجموعۂ علوم»
غزنیہ سی سر محرری (بولاد) افندی بہ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Յ. Այվազյան. — Ընտրական նախագահության անվան թիւնք.
Ս. Յ. Գալստյան. — Առողջապահական,
Ս. Մ. Գալստյան. — Սկզբունք Շարադրութեան.
Ս. Յ. Գալստյան. — Երկրաբանութիւն,
Ղ. Բոլադ. — Գիւղատնտեսական,
Գ. Տ. Մեդեալյան. — Մեղուարուծական,
Կոյի — Միսիտնարներ և ձէնանեան,
Ղ. Բոլադ. — Արհեստագիտական, — Պողպատ,
Թերթոն Հանրագիտակի. — Ուղեւորութիւն երկրիս
կեդրոնը (Ժիւլ Վերն)
Թղթակցութիւն, Ազգ. եւսյըն.

Թուրքիոյ համար տարեկան	50 շրջ.	Հատը 40 փարայ
» » վեցամսեայ	26 »	Դրամի տեղ կ'ընդունուի նամակի դրոշ-
» » եռամսեայ	13 »	մաթուղթ, 50 հատ 1 շրջ. նոց դրոշ-
Արտատահման տարեկան	15 ֆրանք	մաթուղթ 50 շրջ. փ. փոխարէն:
կամ	6 րուպլի	

Տպագր. Գ. ԴԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ-Ալի հատոէսի, Թիւ 4

ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Վերջին թղթատարով ստացուած կարգ մը ծանրակշիռ հանրագիր-բողոքագրերուն մասին յաջորդ-թերթով:

Բարիզաքնակ Տիգրան էֆ. Տողրա-մանեան վեցամսեայ բաժնեգին մը զըր-կելով մեղ, կը փափաքի շարունակել Մալաթիոյ Ազգ. վարժարանին նուիրած մէկ օրինակ «Հանրագիտակ»ի բաժա-նորդութիւնը. մասնաւոր շնորհակալիք:

ԱՐՄԱՇ.—Հ. Տիրայր Վ. Մարգարեան. — Կ'ըսէք թէ Վանքիդ բանջարատանին մէջ լուիճներ (գաթրան կամ մուրտարլըք) յառաջ եկած են, որոնք բակլաներուն վնասելէ յե-տոյ, այժմ ալ լուբիաները և վարունգները կ'ոչնչացնեն. «Հանրագիտակ»ի 10րդ թիւին մէջ, շատ մը միջատասպան դեղերու վրայ գրուած է. ատոնց առաջինը և երկրորդը ամենէն դիւրին ու ազդեցիկներն են, բակ-լի կամ չուբիաի ու վարունգի վրայ ճարա-կող լուիճները ոչնչացնելու համար. այսինքն՝ պարզապէս ծխախոտի հիւթին լուծաջուրը, զոր կրնաք պատրաստել նաև անմիջապէս հետեւեալ կերպով. մէկ օխա ջուրի մէջ 4-5 ծխախոտի տերեւ, կամ նոյնչափ՝ ծխախոտի փոշի դնելով՝ եփեցէք մինչեւ եռալու աստի-ճան, յետոյ լաթէ մը մզեցէք (սիւզմիշ ընել), և եթէ ձարձատող դործի մը չունիք, ցա-խաւելով վարակուած տունկերուն վրայ սրսկեցէք: Գործողութիւնը կատարեցէք, ի-րիկուան ժամը 10էն վերջ. եթէ օդը ամ-պամած ըլլայ, ցորեկն ալ կրնաք կատարել: Հարկաւ այս սրսկման պահուն մէկ քանի լուիճներ կը ճողոպրին, որոնք իրենց արտա-ստվոր բեղմնաւորութեամբ, քիչ օրէն կրկին կը բազմանան. ուստի՝ մէկ քանի օրէն վերջ, պէտք է գործողութիւնը կրկնել. և երրոր-դել իսկ՝ եթէ հարկ տեսնուի:

ՎԵՆԵՏԻԱ.—Վեր. Հ. Ա. Ղազիկեան. — Բազմավէպը չէ հասած. գրելու է ճիշտ մեր տուած հասցէով:

ՕՐԹԱԳԻՒՂ ՓԱՋԱՐՈՒ. — Մինաս էֆ.

Փորթուգալեան. — Կը ղրկուին թիւ 54-57 «Հանրագիտակ»ները:

ՊԱՅԸՆՏԸՐ.—Գէորգ էֆ. Բարազեան. — Ստացանք Ձեր վեցամսեայ բաժնեգինը: Ան-պատճառ դրողմաթուղթ ղրկել հարկ չէ, կրնաք այսուհետեւ մեր Իզմիրի գործակալ, Կարապետ էֆ. Մալէճանեանի յանձնել ձեր բաժնեգինը:

ԿԵՍԱՐԻԱ.—Յակոբ էֆ. Պէչեան. — Ստացանք Ձեր վեցամսեայ բաժնեգինը:

ԳՈՒՇ-ԱՏԱ. — Կարապետ էֆ. Քէհե-եան. — Այո՛, ստացած ենք կանուխէն՝ Ապ-րի էֆ. Ապրիեանի տարեկան բաժնեգինը՝ թիւ 27էն 78:

ՄԱՆԻՍԱ.—Մ. Գալէնտէր էֆ. «Ադա-մէն» բնաւ նմոյշ չի ղրկէր. փափաքողք կըր-նան այժմէն բաժանորդագրուիլ:

ՔԵՍԱՊ.—Ս. Պողիկեան էֆ. — Ստացած ենք նամակնիդ: Ձեր յօդուածը ամբողջա-ցուցէք, և մէկ կամ երկու անգամէն ղրկե-ցէք: Ղրկուած ձեռագրերու պահարանին չորս անկիւնները եթէ կտրուած ըլլան, ցա-մաքային թղթատարը իւրաքանչիւր 50 կռա-մի համար 10 փարայ կ'առնէ, իսկ ծովե-զերքէ ղրկուածներու համար ալ, 75 կռամին 10 փր.: Ծովեզերքէ 20 փարայով, իսկ ցա-մաքէ 40 փարայով փոխադրուած սովորական նամակները կը կռեն 15 կռամ:

ԻՉՄԻՏ.—Գործակալ. — Ձեր ըսած միջատ-ները չի գտանք թէև նամակնուդ պահարա-նին մէջ, բայց իբր դարման կը յանձնարա-րենք, ներկայ թղթակցութեան բաժնին մէջ, Հ. Տիրայր Վ.ի, ուղղուած պատասխանին պարունակութիւնը:

ՄԱԼԿԱՐԱ.—Գործակալ. — Անձկանօք կը սպասուի Ձեր յուսադրած ա'յն նամակին, զոր յղել խոստացած էիք 2-3 շաբաթ առաջ:

ՇԵՐԱՄԻ ՀՈՒՆՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՆՐԱԳԻՏԱԿ (MICROSCOPE)

ՄԻԼԱՆՈՅԻ ՀՈՋԱԿԱՒՈՐ ԲՈՐԻՉԲԱ ՏԱՆ

Կեդրոնատեղի

Յ. Լ. Ա. ՊՈՒԼՈՒՏԵԱՆ Եղբարց Դեղարանը

Ի Չ Մ Ի Տ,

ուր կը գտնուի նաեւ շերամի հունտի պատրաստութեան համար ամէն տեսակ պիտոյք, դիւրամատչելի գներով:

Ծանօթ. — Մանրագիտակներու տե-սակներուն և գիւններուն վրայ փափա-քողներու, մանրամասն տեղեկութիւն կը տրուի թղթակցութեամբ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ՏՆՕՐԷՆ - ԽՄՐԱԳՐԱՊԵՏ

Ղ. ՌՈՒԱՏ

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 66

1899 ՅՈՒԼԻՍ 10

ԸՆՏՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՔ

Ընտրութեան վճռական ժամը հնչեց: Արդարութեան գործոց նախարարութեան մատուցուած եպիսկոպոսական անուանց սրբագրելի ցուցակն — որ երկու շաբաթէ ի վեր կ'սպասուէր ակնապիշ — վերադարձած է միաւորի մը գծմամբ, որ է, Տ. Յովհան Բիւրէլեան (*), Արքեպիսկոպոս առ Դրան:

Այսօր կամ վաղը գործի պիտի ձեռնարկուի, թէ եւ ընտրական խուլ պայքարն արդէն սկսուած է:

Սիւնհոդոսականաց՝ վարչական խնդրոյն՝ եւ Աւագանեաց ժողովականաց մէջ, պաշտօնապէս թէ անպաշտօն՝ կարծեաց շփումներն ու փոխանակութիւնները, գրեթէ ամէն օր տեղի ունեցան ու կ'ունենան:

(*) Արհիապատիւ Բիւրէլեան՝ բնիկ Տիարալէքիւրցի է: Իւր ուսումն՝ ի Զմեաւ առած: Գիտէ լատինացի, փոլերէն, իտալերէն եւ լատիներէն: Բիւջ շատ ալ Արաբերէն եւ Տաճկերէն: Բեմաւաստութեան մէջ վարժ է կ'ըսեն. իսկ պատմագիտութեան մէջ՝ քաջավարժ:

Գրադարեանութիւնը խօսք չուզէր: Քանի մը կտոր ստուարհատոր թարգմանութիւններ տպել տուած է ի վենետիկ:

Ժամանակին՝ Ատանա ալ առաջնորդութիւն ըրած է, բայց համբաւ չի նա՛ծ չէ հոն:

Հրաւիրագիրներն բաժնուած են ընտրութեան ձեռնհաս մարմնոյն իւրաքանչիւր անդամոց:

Գործադրութեան մէջ գտնուող օրէնքին այս մասին գծած տրամադրութիւնը՝ բացորոշ է:

Ի վերլուծութիւն ընթերցողաց, կարդանք քանի մը պարբերութիւնները:

«Ի պարագայութեան Աթուոյ, Փոխանորդ Եպիսկոպոսը՝ Տեղապահի պաշտօնով Աթուոյ պարագայութիւնը Բ. Դրան կը ծանուցանէ, եւ անմիջապէս կը գումարէ զՍիւնհոդոս, եւ երբ ասոր ամբողջութիւնը կանոնաւորապէս կը գոյանայ, կը գումարէ նաեւ զԵկեղեցական եւ զընդհանուր ժողովս: Այս վերջին երկու ժողովները միանալով ընդ գահերեցութեամբ Տեղապահի, նայն օրուան նստին մէջ կ'ընտ-

կաթողիկոսութիւն կ'ուզէ՞ Ինքը՝ թէ ոչ, այդ յայտնի չէ մեզի: Բայց պատրիարքութիւն չուզելը՝ կ'ընամ համարձակ խոստովանիլ. զի ասանօք՝ Անտի-Հասունեանց ստանձնած պատրիարքութիւնը՝ կամացուկ մը լքեց, ու գիշերանց առաւ քալեց:

Այժմ, ամէն բանէ հրաժարած, ի Հռովմ մեկուսացած է, ուր յողովատուական եւ արհաւիրաց Դրան-երէցներու դերը կը կատարէ սրտի հանդարտութեամբ եւ խղճի ազատութեամբ՝ օրհներով եւ փառաբանելով իր ժողովուրդը:

րեն կաթողիկոսական Աթոռոյ պատկանող Եպիսկոպոսաց ցանկէն հինգ եպիսկոպոս (*) , և անոնց անուանց ցուցակը ըստ կարգի երկրորդական կը ներկայացնեն Սիւնհոգոսի : »

Պատեհ աւիթը չէ՞ , որ յիշեցնեմ եկեղեցական պատմութենէն՝ Կոտայեցիին կաթողիկոսական ընտրութիւնը :

Կոտայեցիին Զաքարիա՝ վարդապետ ալ չէր՝ ընտրուած ժամանակ , այլ սոսկ աշխարհական մը , սակայն անվիճելի արժանիք ունէր : Ուստի 854ին , Շիրակաւան գիւղի մէջ բազմաթիւ ժողովականաց հաւանութեամբ՝ կաթողիկոս ընտրուած է , և մէկ օրուան մէջ սարկաւազ , քահանայ , եպիսկոպոս և կաթողիկոս ձեռնադրուած : Վասն զի՝ կաթողիկոսութեան ընտրական իրաւունքն ամենեւին խտրութիւն չի դնէր եկեղեցականի և աշխարհականի մէջ , ըստ առաքելական սովորութեան Հայ . Եկեղեցւոյ , ինչպէս յայտնի է նոյն խի Լուսաւորչի և Մեծին Ներսէսի ընտրութեան պատմութենէն , որպէս գրուած է «Պատմութիւն Հայ . Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ» պատմական մատենին մէջ :

Թողունք անցեալ պատմութիւնը , նոյն խի 1866—1867ին Ազգ . Պատրիարքարանի մէջ գումարուած վիճակային Համագումար ժողովը՝ որ 11 Եպիսկոպոսներէ , 18 Վարդապետներէ և 14 Քահանաներէ կը բաղկանար , երբ միևնոյն ժամանակ , Ս . Էջմիածնի , Սույ և Աղթամարաց Աթոռները թափուր մնացած էին , ատոնց կաթողիկոսական ընտրելաց եռապատիկ ցանկերը՝ պատրաստելու համար , յիշեալ երեք կաթողիկոսութիւններէն ձեռնադրեալ 49 եպիսկոպոսաց ցուցակին վրայ՝ նաև անխորաքար երկու վարդապետներ ալ՝ Տէր-Սարգսեան Երեմիան և Տարօնոյ ու Վարազայ վանուց համբաւոր Վանահայրը — որ այն ատեն տաւալին եպիսկոպոսացած չէին — չաւերցուեցան Աղթամարայ կաթողիկոսութեան համար , ի Ս . Էջմիածնի ձեռնադրեալ Լմայ Անապատահայր Թօփուղեան Յակոբ եպիսկոպոսին հետ :

Եւ եթէ քիչ մ'ալ պարտենք , և մտքերնիս ճանկրտենք , չե՞նք գտներ համագոյն տարեգրութեանց մէջ թէ՛ 1753 Յունիս 29ին Տանն Լիւանանու կաթողիկոս ընտրուող Բերիացի Բարսեղեան Միքայէլ կաթողիկոսը՝ Անտօնեան միաբանութեան վերաբերող պարզ քահանայ մ'էր , որ Բենեդիկտոս ԺԴ . Ս . Պապէն հաստատուելու առթիւ , գովեց յանձին Միքայէլ քահանայի կատարուած արժա-

նաւոր ընտրութիւնը , գնահատելով միանգամայն ընտրող եպիսկոպոսներուն՝ ըստ Հայկական սովորութեանց և կանոնաց վարուելով , եպիսկոպոսի և քահանայի միջև խափր չի դնելն , ու պարզ քահանայ մը՝ ուղղակի ի Կաթողիկոսութիւն կոչելն :

Նոյնպէս , 1780ի վերջերը չէ՞ր , որ դարձեալ Անտօնեան միաբանութենէն պարզ քահանայ մը՝ Հալէպցի Բարսեղ-Պետրոս Դ . կաթողիկոսացաւ , Սիւնհոգոսական եպիսկոպոսներէն կանխաւ ձեռնադրուելով եպիսկոպոս :

Անցնինք սոյն մանրամասնութիւնները , և շարունակենք մեր ընթերցումը՝ օրինաց տրամադրութեանց մասին .

«Յօդ . 12 .—Ընտրելաց ցուցակին կողմութեան համար , պէտք է որ եկեղեցական և ընդհանուր ժողովներուն ամբողջ անդամաց երկու երրորդ մասը ներկայ գտնուի , և ճերկայ անդամաց քուէից երկու երրորդին առաւելութիւնը գոյանայ :

Յօդ . 13 .—2ի կրնար Կ .—Պատրիարք ընտրուել եկեղեցական մը , որ եկեղեցական կամ քաղաքական յանցանաց համար դատապարտութիւն կրած է , կամ դատաստանի տակ կը գտնուի :

Յօդ . 14 .—Սիւնհոգոսն իրեն ներկայացեալ հինգ ընտրելիներէն զմին՝ միևնոյն շարունակեալ գումարման մէջ կ'ընտրէ Կաթողիկոս-Պատրիարք՝ ամբողջ անդամաց քուէից երկու երրորդին առաւելութեամբը :

Սիւնհոգոսին վրայ ո'ր և է ձեռնում խըստիւ արգիլեալ է :

Հա՞րկ է հարցնել թէ՛ հնգանուն եպիսկոպոսաց ցանկը , երկագոյնի՞ն կարգաւ պիտի պատրաստուի , թէ՛ քուէից՝ առաւելութեան կարգաւ :

Թերեւս սոյն խնդրոյն քննութիւնը՝ մեզի հեռունելը տանի : Ուստի մենք այստեղ սկիտի բաւականանա՞նք , յառաջ բերելով Տանն Լիւանանու կաթողիկոսական ընտրութեան հին կամ նահապետական դրութիւնը՝ յատկանշելով :

1788ին Զմեռեանք՝ Համագումար նստի մը մէջ հետեւեալ տնօրինութիւններն ըրած են , որ օրինաց կարգ անցած և հետզհետէ նուիրագործուած են :

Այդ կանոնական տնօրինութիւններն գաղափարած ենք իրազեկ անձի մը հրատարակութենէն :

Կաթողիկոսի վախճանումէն անմիջապէս յետոյ , ընդհանուր միաբանութեան հաւանութեամբ նոր Տեղապահի ընտրութիւն պիտի կատարուի , և ըստ կանխորոշ կարգադրութեանց , կաթողիկոսի ընտրութեան պիտի ձեռնարկուի : Կաթող . Տեղապահը պիտի

(*) «Կաթողիկոսութեան հինգ ընտրելաց մէջ նաև վարդապետք կրնան գտնուիլ : Այս կէտը ապագայ գումարուելիք Սիւնհոգոսի որոշուրութեան ենթարկեալ է : »

հրաւիրէր Աթոռոց եպիսկոպոսներն ի Սիւնհոգոս :

Եպիսկոպոսներն հաւաքուելուն պէս, քուէից քննիչ կը կարգուէին երկու Զմեռեան վարդապետներ, երկու վարդապետ ալ նժուար, և մէկ վարդապետ ալ Սիւնհոգոսի Դրան պահապան :

Ժողովոյ մէջ ընտրող եպիսկոպոսներէն զատ՝ երկու վարդապետ ալ կը մասնակցէր ներգործական ձայնիւ, այսինքն, քուէով : Մին՝ եպիսկոպոսաց, և միւսն՝ Միաբանութեան կողմանէ ընտրուած :

Անտառութեան իրաւունք ունեցող եպիսկոպոսներն, երկու պատգամաւոր վարդապետներն ու միւս պաշտօնեայք եկեղեցի մտնելով, երկգագայն Եպիսկոպոսը Սիւնհոգոսին կը նախագահէր և Ս. Պատարագ մատուցանելէ վերջ, Աւագ Խորանին վրայ կը տնէր Ս. Աւետարանն և Սկիհը : Սեղանին առջեւ դրուած Աթոռին վրայ բազմելէ յետոյ, Եպիսկոպոսներն տարիքներուն համաձայն, և յետոյ Գննիչներն ու Նոտարները բոլորակբ կը բազմէին և հաւատարմութեան երդում կ'ընէին կարգաւ :

Ընտրողք՝ իրենց ընտրութեան տոմսակը Սկիհին մէջ կը նետէին, և քուէներուն ճշգրտութիւնը և թիւը օրինաւորապէս հաստատուելէն վերջ՝ Գահերէցը կը հրատարակէր առաւելութիւն քուէից ստացող Եպիսկոպոսը կամ վարդապետը : Հայրապետական զգուշանք կը հազցնէին յատենի ժողովոյ : Հովուական գնտածե Գաւազանը կու տային և կը մատչէին ի համար Ս. Աջոյ նորընտիր կաթողիկոսի :

Ընտրեալ Հովիւը բոլոր արարողութիւնները կատարելէ վերջ, Եպիսկոպոսաց հետ իր օծման օրը կը սահմանէր :

Օծումէ վերջ՝ Սիւնհոգոսական գրութեամբ մը Սրբազան կաթողիկոսն՝ իր ընտրութիւնն ու օծումը հանդերձ հաւատոյ դաւանութեամբը, կը ծանուցանէր ի Հոռովմ, ուսից պիտի գար Հաստատութեան կոնդակ և ստանար պատուոյ Պալիսմը :

Կաթողիկոսական ընտրութեան այս ձեւը, այս տարազը պահուած է արդեօք, յօրէ անտի կաթողիկոսական Աթոռը՝ Զրմամառու մայրականքէն, ի Բերս փոխադրուեցաւ : Զենք գիտեր :

1867ին, երբ Արհիպատիւ Անտոն Հասուն, Անարզարայ տիտղոսաւոր Արքեպիսկոպոսը՝ երկու Աթոռոց ձուրմամբ, կաթողիկոս ընտրուեցաւ, և 1867ին Հոռովմ երթալով, ընդունեց Պալիսմը, և Արեւելեան պատրիարքաց համար որոշեալ ուխտը կատարելէ վերջը, Պոլիս վերադարձաւ և օգոստոս 15ին կաթողիկոսական հանդէսը կատարուեցաւ : Դժբաղդաբար այս հանդէսին ներկայ չէինք :

սակայն Տ. Անտոն-Հասուն Պետրոս Թ.՝ երբ եպիսկոպոսական ձեռնադրութիւններ կը կատարէր, գրեթէ շատերուն հանդիսատեն եղած ենք :

Եւ ապաքէն սոյն վերջընթեր կաթողիկոսի օրով 16-17 եպիսկոպոսներ ձեռնադրուած են, որոց անունները կրնամ կարգաւ յիշել, որչափ կը ներեն տկար յիշողութիւնս :

1.—Շիշմանեան Անտոն Գերապայծառ Գաղատիոյ :

2.—Տէր-Դաւթեան Գերապայծառ կարնոյ :

3.—Աստարճեան Գերապայծառ կարնոյ :

4.—Պահատուրեան Գերապայծառ Պրուսայոյ :

5.—Առաքելեան Յովսէփ Գերապայծառ Տրապիզոնի :

6.—Հալաճեան Գերապայծառ Արգուինի :

7.—Թիւրքեան Պետրոս Գերապայծառ Պրուսայ :

8.—Սեւքեան Յովհաննէս Գերապայծառ կարնոյ :

9.—Կիւրեղեան Յովհաննէս Գերապայծառ Տրապիզոնի :

10.—Խորայէլեան Ստեփաննոս Գերապայծառ Խարբերդի :

11.—Մելքիսեդեկեան Ստեփաննոս Գերապայծառ կարնոյ :

12.—Մարմարեան Պօղոս Գերապայծառ Պոնտոսի :

13.—Առաքելեան կարապետ Գերապայծառ Գաղատիոյ :

14.—Ղատիֆեան կարապետ Գերապայծառ Սեբաստիոյ :

15.—Միքայէլեան կղեմէս Գերապայծառ Գերմանիկոյ :

16.—Ազարեան Ստեփաննոս, տիտղոսաւոր Արքեպիսկոպոս Նիկոսիոյ :

17.—Զաքարեան Յովհաննէս Գերապայծառ Արգուինի, որ եպիսկոպոս ձեռնադրուած է՝ հրամանաւ Տ. Անտոն-Հասուն կաթողիկոսի, ի ձեռն Տ. Ստեփաննոս Մելքիսեդեկեան Արքեպիսկոպոսին կարնոյ :

Այս 17 եպիսկոպոսներէն այժմ միայն Տրապիզոնի Արքեպիսկոպոսը ողջ է, որուն արժանիքը՝ անգամ մը ևս չեշտելու համար, կ'ուզենք քանի մը տող ևս նուիրել իր վաստակաբեկ կեանքին նկատմամբ :

ՊՕՂՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՄԱՐԵԱՆ.— Բնիկ Տրապիզոնցի է, և 1833 Վետր. 27,

Բուն Բարեկենդանի օրը ծնած: Ուրախ, զուարթ, անմեղ եկեղեցական մ'է:

Ուսմունքը՝ Պոլսոյ կղերանոցին մէջ առած է:

1857 օգոստ 22ին վարդապետ ձեռնադրուած է ի Պոլիս, Առաքելեան Յովսէփ եպիսկոպոսէն: Իսկ եպիսկոպոս ձեռնադրուած է Տ. Անտօն-Հասուն կաթողիկոսէն՝ 1877 սեպտ. 14, Վերայման Ս. Մաջի Տօնի օրը: Օծակիցներն էին՝ Տ. Ստեփաննոս Ազարեան, Տ. Կարապետ Առաքելեան Գաղատիոյ, Տ. Կարապետ Ղատիֆեան Սերաստիոյ, և Տ. Կղեմէս Միքայէլեան Մարաշի:

Մարմարեան՝ գիտէ Հոյերէն, Իտալերէն, Լատիներէն, Ֆրանսերէն և Տաճկերէն:

Յամառ ընթերցող մը, և հետաքրքիր ուսումնասէր մ'է: Իր թեմականաց մէջ ուսմունքը տարածելու համար՝ Վենետիկոյ Միթիթարեանց շատ յարեալ է:

Բարեգործութիւնն ալ շատ կը սիրէ, և իր թեմէն դուրս գտնուող ազգայնոց ալ քիչ չատ օգնած է: Վերջին անգամ չէր որ՝ Երուսաղիմայ մէջ նորոգ կառուցանելի Հայ Հռովմէականաց վանքին համար՝ մինչև յժերոպա հանգանակութեան ելաւ, և բուռնակալ կրտիկ գումար մը հաւաքելով՝ Տ. Ստեփաննոս Ազարեան կաթողիկոս - Պատրիարքին յանձնեց՝ իշխարտ ու պառչած անօրինութիւն, և յաւերժական յիշատակ ի Սիօն՝ իւր անմահական հոգւոյն:

* * *

Մենք Հայ Հռովմէականաց կաթողիկոսական ընտրութիւնը ընտու տեսած չեմք: Սակայն երկու ժամանակակից կաթողիկոսներու արարողութեանց ներկայ գտնուելու բաղդն ունեցած ենք: Առաջին անգամ 1877ին, ի Բերա Ս. Յովհան Ոսկերեան եկեղեցւոյն մէջ, ուր Պաթիթարեան Յակոբ Արքեպիսկոպոս՝ օրհնուեցաւ կաթողիկոս, առ ընթերակացութեամբ Գաղանձեան Սուքիաս, Բիւրէլեան Յովհան և Դաւթեան Սերովբէ եպիսկոպոսաց: Երկրորդ անգամ, 1881 Յունիս 24ին, ի Ղալաթիա Յիսուս-Փրկիչ եկեղեցին, ուր Նիկիոյ աթոռատուր Արքեպիսկոպոս՝ Տ. Ստեփաննոս Ազարեան(*), կաթողիկոս օրհնուեցաւ, նախաձեռնութեամբ Նազարեան Տ. Մելքոն համակրելի և տաղանդաւոր եպիսկոպոսին, և մասնակցութեամբ 6—7 եպիսկոպոսաց:

(*) Տ. Ազարեան սրբազան՝ 18 տարուան պաշտօնավարութեան մէջ՝ 13 եպիսկոպոս ձեռնադրած է ինքը անձամբ, և երեք ալ՝ իր հրամանաւ՝ փոխանորդ օրրազանին ձեռնադրել տուած, որք են. Իմմանուէլեան, Ֆերահեան, Յովհաննէսեան, Ճամճեան, Փշուրեան, Արփիարեան, Թուրքեան, Ագշէճիլլեան, Թերզեան, Հաճեան, Ճնաղկոն, Ալթոնեան, Ասլանեան, Խաչատուրեան, Չէլէպեան և Խարպէլեան եպիսկոպոսները:

Այս երկուքին ալ կաթողիկոսական արարողութիւններն և հանդիսութիւններն ուշի ուշով դիտեցի: Եղած, կատարուած ձեւակերպութիւններն՝ սոսկ օրհնութիւններ էին, և ոչ կաթողիկոսական օծումն, ինչպէս տեղի կ'ունենան յէջմիածին, ի Սիս և յԱղթամար: Եւ չենք գիտեր թէ՛ ինչպէս կը կնատարուէր կամ կը սրբազործուէր երբեմն ի Զմեառ՝ կաթողիկոսական անուանման եկեղեցական արարողութիւնը. թէ՛ ստոյգ է որ՝ կաթողիկոսական օծման արարողութիւնը կամ ծիսակատարութիւնը, շուրջ 600 տարուան սովորութիւն մ'է, որ կիլիկիոյ Աթոռէն փոխանցուած է յէջմիածին և յԱղթամար, ուր մինչև ցարդ անվթար և անխափան կը շարունակուի ինչ ինչ բանաւոր պատճառներով:

Արդ, մեր հարց դաւանութեանց և աւանդութեանց հետաորք և բարեպաշտութեան ինչո՞ւ չը հետևին գործնականապէս, նախնեաց ծէսերուն և աւանդութեանց, քանի որ ինքզինքնին ջերմեռանդ նախաձեռնողի և թունդ հայտնող ներկայացնել կը սիրեն ողջամիտ հասարակութեան հանդէպ:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ

ՄՏԱԽՈՐԱՊԷՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ

Մենք՝ իրենց պաշտօնին տեսակէտով, երկու տեսակ ջղային դրութիւն ունինք. կենդանական ջղային դրութիւն և համակրական ջղային դրութիւն: Համակրական ջղերու պաշտօնն է գիշեր ցերեկ հսկել մարմնոյն ներքին գործարաններուն վրայ, դիւրացնել և կանոնաւորել արեան շրջանը, մարտողութիւնը, մաղձի և մէղի գործողութիւններն և այլն: Կենդանական ջղերու պաշտօնն է՝ աղդել համակրական ջղերուն վրայ, հրամայել անոնց՝ և ի գործ մղել զանոնք. որովհետեւ համակրական ջղային դրութիւնն առանց կենդանական ջղերու ազդեցութեան կը ծուլանայ, դանդաղ կը գործէ: Եւ կենդանական ջղերն այն ատեն կը կատարեն իրենց պաշտօնն, երբ մարդ ֆիզիկապէս կամ մտաւորապէս կ'աշխատի, կը գործէ,

զբաղեալ է։ Եւ երբ կենդանական ջղային դրութիւնը չստիպեր համակրական ջիւղերը սովորականէն աւելի գործելու, այն ատեն արեան շրջաբերումը բաղդատաբար դանդաղ կ'ըլլայ, և ըստ այնմ աւելի պատեհ առիթ կ'ունենայ, մարմնոյն մէջ՝ իր ընթացքով թարմ և կաղ-դուրիչ հիւթ ու նիւթ սփռել ծաւալելու, դաշտին վրայէն մեղմիկ հոսող վտակի մը նման, որ իր ափունքը կ'ուռոգէ, կանանչագեղ և գոյնզգոյն ծաղիկներով կը պճնազարդէ ու կ'արգիւնաւորէ։ Եւ երբ արեան շրջաբերումը սովորականէն աւելի արագ ըլլայ, ինչպէս արթնութեան և աշխատութեան միջոցին, այն ատեն արիւնը, այդ կենսատնորոգ և ուժապարդեւ տորրը, առիթ չունենար իր դերը կատարելու, այն է նոր հիւթ և նիւթ տալու՝ բաշխելու։ Այս վերջին պարագային մէջ ալ՝ զառիթափէն հոսող արագընթաց վտակի մը կը նմանի, որ սոսկ իր ընթացքը կը մաշեցնէ առանց իր ափունքը ոռոգելու կամ իր յատակը մատնաչափէ մ'աւելի խոր թրջելու։ դարձեալ երբ մեր բազուկը կամ սրունքները գործածենք, աշխատեցնենք, արիւնը հոն այդ գործօն անդամին մէջ կը հաւաքուի։ Այս ճշմարիտ է նաև մարմնոյն միւս մասերուն և անդամներուն համար։ Այսպէս ուրեմն՝ երբ մեր ուղեղը կ'աշխատեցնենք, մտաւորապէս կ'զբաղինք, այս անգամ ալ արիւնը հոն դուրսը կը վազէ և ուղեղին մէջ կը հաւաքուի սպառածը լեցնելու համար, և հետեւաբար միւս անդամները վտիտ և նիհար կը մնան չեն պարարիր։ Այս իսկ է պատճառը՝ որ ուսողութեամբ, փաստաբանութեամբ բժշկութեամբ, ուսուցչութեամբ, և ուրիշ միտքը չարչրկող գործերով պարապողները, նաև անոնք՝ որ միտքն ու ջիղերը դրդուող վէպեր, և յուզիչ նկարագրութիւններ չառ կը կարդան, կ'ըլլան վախտ և դաշկաղէմ, կ'ունենան դիւրաբեկ և կարճատե կեանք մը, քան ֆիզիզապէս աշխատողներն, որ

րոյ գոնէ միտքը խաղաղ է և անդորր, և որ իրենց աշխատութենէն անմիջապէս վերջ իսկ կրնան քնանալ անդորր,

Հետեւաբար՝ մտաւորապէս աշխատողներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք սա մի քանի ողջպահիկ թելագրութիւններուն վրայ։ Ինչպէս վերը ըսինք, երբ միտքը կ'զբաղի, կը գործէ, արիւնը հոն ուղեղին մէջ կը հասի, կը հաւքուի և ուղեղին այդ արիւնաշատ վիճակին մէջ անկարելի է որ ենթական դիւրաւ ի բաց վանէ իր միտքն զբաղեցնող, յուզող խորհուրդները, կամ խղէ անոնց թելը և քնանայ խաղաղիկ, մինչեւ որ ջիղերը չհանդարտին, և մինչեւ որ ուղեղն յորդող արիւնը չպարպուի։ Եւ որպէս զի արիւնն իր սովորական շրջանը կատարէ կանոնաւորապէս, և մենք ալ անոյշ անոյշ քնանանք, պէտք չէ՝ որ իրիկունները պառկելէ առաջ ծանրատաղտուկ հաշիւներու և խնդիրներու ու լուծման պարապինք։ Հաճելի խօսակցութիւն մը, զուարճալի ընթերցում մը կամ պարտիզամիջի կարճ պտոյտ մը, յաճախ ամենէն դիւրին և աժան դեղթափներն են։ Ուղեղի աւելորդ արիւնը պարպելու կամ անոր յետադարձ շրջան մը կատարել տալու միջոցներէն մին է, պառկելէ առաջ թեթեւ գիւրամարս վերջընթիք մ'ընել, 1-2 պտտաւ հաց ուտել, կամ քանի մը հասած թարմ պտուղ ուտել, ստամոքսը զբաղեցնել, որպէս զի արիւնը մարսողութեան գործին աջակցելու համար՝ այս անգամ ալ դէպ ի ստամոքսը վազէ, հորդան տայ, և այսպէս միտքը հանդարտելով թեթեւնայ, և ունենանք մարմնոյն հանգստեան այն երանելի, ցանկալի վիճակը (*) որուն քուն կ'ըսենք, և որ իւրն է մարդամեքենային, Ս. Յ. ԳԸԶԸԼԵՆՆ

(*) Ըստ բնախօսութեան, քունը մարմնոյն հանգստեան մէկ վիճակն է։

Ս Ս Ջ Ք Ո Ւ Ն Ք

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

(Շար. թիւ 61 էն)

3. ՄԻԱՆՇԱՆԱԿ ԲԱՌԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒՄ

Միանշանակ բառերը յստակութեան աստիճանը կը բարձրացնեն. իսկ բազմանշանակ բառեր կրնան երկդիմութիւն պատճառել օրինակ.

Կը լսե՞ս հաւուն խօսիլը:

Այս խօսքը երկդիմի է. կը նշանակէ՝ թէ աքաղաղին խօսիլը և թէ մեծ հօրը խօսիլը:

Մեր կենդանի լեզուն իր բառարանէն վտարած է, թերեւս ի սէր յստակութեան, ոչ ստիպել բառերու երկրորդական և երրորդական նշանակութիւնները. «հաւ» բառը որ գրարարի մէջ չորս նշանակութիւն ունի՝ աշխարհարարի մէջ գրեթէ երկու նշանակութիւնով միայն կը գործածուի:

Թատակութիւնը կը պահանջէ որ ջանանք միանշանակ բառեր գործածել: Ուր որ կարելի չէ գոյգը ընել, գիտելու է որ մեր գործածելիք բազմանշանակ բառը, մեր խօսքին մէջ մեր ընդունած նշանակութիւնով հասկցուի. եթէ այնպէս չի հասկցուիր, կրնանք բառին ընդունած նշանակութիւնը կամ սահմանը տալ:

Մարդերու մէջ ո՞րքան վիճաբանութիւններ կը սլատահին որոնք վերջ չեն ունենար. որովհետեւ երկու կողմերուն և ոչ մին հասկըցած է թէ՛ իր հակառակորդը և թէ ինքզինքը: Բառերուն՝ որոնցմով վիճաբանութեան նիւթը յառաջ կը բերուի՝ ներկայացուցած գաղափարները ըստ բառականին ըմբռնուելու են, որպէս զի երկու կողմերը խօսելու իրաւունք ունենան:

4. ՄԵՐ ԴԻՄԱՑԻՆԻՆ ՈՒՂՂԵԱԼ ԸՆՏԱՆԻ ԲԱՌԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒՄ

(Պատշաճեցում)

Պատշաճեցումը, իբրեւ պայման յստակութեան, կը պահանջէ որ՝ գրելու կամ խօսելու

լու ատեն՝ մեր գիմացիներն ընտանի բառեր գործածենք. վասն զի յստակութիւնը յարաբերական յատկութիւն է, այսինքն ինչ որ պայծառ է մէկու մը՝ կրնայ մթին ըլլալ ուրիշի մը՝ որ տարիքով աւելի փոքր՝ կամ մտքով նուազ մշակուած է: Ինչ որ պարզ ու լուսաւոր է ուսեալներու կամ չափահասներուն՝ կրնայ խրթին ու մթին ըլլալ անուաներու կամ մանուկներուն: Ճիշդ ինչպէս որ քան ջողջ անձի մը դիւրութեամբ մարտած կերպէն՝ վատառողջի կամ մանուկի մը համար կրնայ անմարտելի ըլլալ: Խօսող մը կամ գրող մը, ինչ որ ըլլայ նիւթը՝ որուն վրայ կ'ուզէ ճառել, նկատի առնելու է գիմացիներն տալիքն ու իմացական մակարդակը:

Իւրաքանչիւր արուեստ կամ գիտութիւն, ունի իրեն սեփական բարբառը, որ կրնայ գործածուիլ, երբ զինքը հասկցաւներու ուղղուի: Օրինակի համար, բժիշկներու կամ բժշկութիւն ուսանողներու ուղղութեամբ մը կամ ճառի մը մէջ բժշկական բառերու գործածումը պատշաճ է. վասն զի զանոնք շարունակ գործածողներուն՝ այնպիսի բառեր աւելի ճիշդ են քան ուրիշ բառեր:

Սակայն ժողովուրդին խօսող մը կամ գրող մը յարգելու է ժողովուրդին բառարանը՝ առանց մեղանշելու մաքրութեան դէմ: Խօսող մը կամ գրող մը ինքզինքը դնելու է անոնց տեղը՝ որոնց կ'ուզէ բան մը սորվեցնել և օգտակար ըլլալ: Եթէ չի խոնարհիր անոնց, չի կրնար շահագործուիլ կամ շարժել զանոնք: Նկատի առնելու է կերպը՝ որով ախրնք գաղափարներ կը լսացատրեն ու կ'ընդգրկեն:

Հաւանքէն՝ ուրիշ ո՛ր և է քանէ աւելի սա է պատճառը, որ կարգ մը քարոզիչներ կարող կ'ըլլան ի մի վայր համախմբել ու պահել ունկնդիրներու յոգնախառն բազմութիւն: Անոնք մօտ կու գան ժողովուրդին՝ որուն կը խօսին, ու զանկիայ աւելի բարձրերը կ'առաջնորդեն քայլ առ քայլ:

«Պերճախօսութիւնը», ինչպէս կ'ըսէ հեղինակ մը, «ճշմարտութիւնը մեր գիմացիներն կատարելապէս հասկնալի լեզուի թարգմանելու կարողութիւնն է»: Ան որ կ'ուզէ պատուարժան պարօն բթամիտին ցուցնել ճշմարտութիւն մը՝ զոր սլարդն բթամիտ չի տեսներ՝ իր արուեստին տէրն ըլլալու է: Ատենախօսութիւնը հասարակ բան մըն է:

բայց ճշմարտութիւն մը պարոն բթամիտի լեզուին թարգմանելու կարողութիւնը հազ-դաագիւտ է :

Արտադրութեան մը ոճը դատելու ատեն բանաւոր է նկատի առնել կարողութիւնը անոնց՝ որոնց ուզողւած է ան :

Ըսուած էրէն կը հետեւի թէ՛ երբեմն հարկ կ'ըլլայ ճշգրտութիւնը յստակութեան գո-հել : Ըշգրտութիւնը որ, մասնագէտի մը հա-մար, յստակութեան անհրաժեշտ է, կրնայ երկ մը հանրութեան անհասկնալի ընել : Ուրեմն գիտուն մը՝ որ Գոգէտներուն գիտա-կան ծանօթութիւններ կ'ուզէ հաղորդել՝ ի-րողութիւններ ու սկզբունքներ օլարգ՝ բայց անճիշդ լեզուով ներկայացնելով շատանալու է :

Պարտիզակ

Ս. Մ. Գոգէտ

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՏԱՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԲ

ՆԵՐԱԾՈՒՄ

Ա.

Քարի զանազան տեսակներ և անոնց գործա-ծութիւնը. — Ստորերկրայ քարէ տախ-տակամածն և անոր ազդեցութիւնը՝ բնակչաց գործոց վիճակին վրայ : Նկարագիր Մեծին Բրիտանիայ :

(Շար. թիւ 65 էն)

7.—Հետեւեալ կարգ մը դասերը յստ-կացուած են այս քարէ տախտակամածն ու-ռումնասիրելու. — Թէ ի՞նչ բանէ կը բաղկա-նայ այն, և թէ ի՞նչպէս միացած են իր զա-նազան մասերը : Գուցէ առաջին տեսութեամբ ընթերցողը այս օրինակ նիւթի մը մէջ շատ չահեկան և հրապուրիչ բան մը չգտնեն, սա-կայն, հետագայ լուսաբանութիւնը իբրև օրի-նակ բաւական է համոզելու մեզ թէ, Ժո-ղովրդեան մը պատմութիւնն ու նկարագիրը,

և մեր հանապազօրեայ կենցաղի երեւոյթ-ներն ո՞րչափ ազդեցութիւն կրած են, կը կրեն ու պիտի կրեն այն քարէ տախտակա-մածին՝ որուն վրայ կ'ապրինք, այլազան բնութեանէն և ձեւէն :

8.—Օրինակի համար ա՛ն Բրիտանական կղզեաց քարտէսը և կոտար գրչով երկու խոտոր գծեր գծէ՛ : Թո՛ղ ասոնցմէ մին սկսի ի Լիվրուլ, անցնելով Անգլիայէն՝ անցնի՝ Սոէթօրտ, Պիրմինկհամ և Բէմպրիճ, ու յետոյ խոնարհի դէպ ի Հարուիչի ծովը : Թո՛ղ միւսն ալ գծուի Սկոթլանդ լայնքէն անցնելով Սքայ կղզիէն մինչեւ Մօնդրօգ :

9.—Ենթադրենք երկու օտարականներ՝ որք բնա՛ւ այդ երկիրը ոտք կոխած չեն : Եթէ երկուքն ալ արեւմուտքի կողմէն ցամաք ելնէին, և կղզին անցնելէ վերջ իւրաքանչիւրն հետեւէր այն գծերէն միոյն՝ զոր դու գծե-ցիր, և եթէ ի վերջոյ կրկին իրարու պատա-հէին և իրենց ծանօթագրութիւնները բաղ-դատէին՝ ուղևորն որ Լիվրբուլէն ցՀարուիչ ճամբորդեց, մեծաւ հաւանականութեամբ տա՛պէս պիտի տեղեկագրէ իր ճամբորդու-թիւնը. «Կր հիանամ Մեծին Բրիտանիոյ տա-փարակութեան վրայ : Կղզիին ամբողջ լայն-քէն անցայ, և ըլլաւ ըսուելու արժանի ան-հարթութեան մը չպատահեցայ : Երկրին մե-ծագոյն մասը զարմանալի կերպով արգասա-բեր է. մէկ մասը ցորենադաշտերով և մէկ մասն ալ միգաստաններով և անտառներով ծածկուած են. մինչդեռ ընդարձակ գետին-ներ ալ կան՝ որ արօտատեղիներ ըլլալու յատկացուած են : Տուներն աղիւսաչէն են : Քանի մը խոշոր և բազմամարդ քաղաքներ տեսայ, որ ճարտարագործութեան ամէն ձե-ւերովն ու տարազներով ոգեւորուած էին : Դիտեցի նաև թէ երկրին քանի մը մասանց մէջ բնակչաց հարստութեան մեծագոյն աղ-բիւրն է երկիրը, անոր խորունկ մասերը : Ի Քէշայր մեծաքանակ հանքային աղ կ'ար-տածեն : Սոէթօրտի մէջ բազմաթիւ խորունկ հորեր կան, ուսկից ածուխ և երկաթ միառին կ'արտադրեն : Սկայն, ի վերայ այս ամե-նայնի, կարծես թէ Մեծն Բրիտանիա սահ-մանուած է ցորենի դաշտ և արջառներու արօտավայր ըլլալու :

10.—Միւս ուղեւորին նկարագրութիւնը շատ աւելի տարբեր պիտի ըլլայ. «Զմ կրնար

ըմբռնել և հասկնալ՝ թէ ինչպէս Բրիտանիոյ նկատմամբ կ'ենէք կ'ըսէք թէ հարթ և տա-
փարակ դաշտագետին մ'է: Ե՛ս ալ անցայ
կղզին՝ ծովէ ծով. Մօնթրօզի նաւահանգիս-
տէն նաւելով մինչեւ Ինվըրնէսայրի ափուն-
քը քերեցի, տակայն ամբողջ ճամբորդու-
թեանս միջոցին: Հազիւ կրցի ցած և տափա-
րակ գետին մը տեսնել: Անիկա՝ ցից և բարձր
լեռներու և խոր ու ապառաժուտ հովիտնե-
րու անվերջ յաջորդութիւն մ'էր: Մինչև որ
արեւմտեան ծովագետին հասայ, բնա՛ւ աւան
չտեսայ, բաց ի քանի մը գիւղերէ: Ժողու-
վուրդը քարաշէն տնակներու մէջ կը բնակի:
Հատ մը աղիւս չտեսայ: Անոնք ածուխ չու-
նին. աղքատ դատակարգին մեծագոյն մասը
հեռակայ ճախին վրայի կուպրը կտրելով,
իբրեւ վառելանիւթ կը գործածէ: Ո՛չ հանք
տեսայ, և ո՛չ ալ ո՛ր և է գործարան մը: Բազ-
մամարդութիւնը ցանցառ է, կը թուի թէ
գլխաւորաբար խաշնարածները գրաւած են
երկիրը: Ըստ իս, իմ անձնական փորձառու-
թեանս համաձայն, ամբողջ Մեծն Բրիտանիա
խորտուբորտ և լերկումերկ լեռնային եր-
կիր մ'է, առանց վաճառականութեան կամ
ճարտարագործութեան, և յարմար միայն տ-
րտաւաճայր ըլլալու: Մշակելու յարմար գե-
տիներ չունի:

11.—Հիմա այս ենթադրեալ ուղեւորնե-
րը՝ որչափ որ իրենց անձնական փորձառու-
թիւնը կը ներէր, իրենց ճամբորդած երկիրը
ճշդիւ նկարագրեցին: Եւ սակայն, տակաւին
սխալ պիտի ըլլայ ենթադրել թէ՛ զոր ինչ
մին նկարագրեց, ճշմարիտ պիտի ըլլայ միւ-
սին ճամբորդած երկրի մասին և հաւասարա-
պէս ճշմարիտ՝ ամբողջ երկրին համար:

12.—Երկրագնտիս ո՛ր և է մասին վրայ
նմանօրինակ ներհակութիւններ կարելի է
տեսնել: Բայց, ինչո՞ւ այս տարբերութիւն-
ները միեւնոյն երկրի տարբեր մասանց վրայ:
Ո՛չ նուազ հետաքրքրական է գիտնալ նաեւ՝
թէ ինչո՞ւ երկիր մը լեռնային՝ ուրիշ մ'ալ
տափարակ, մին բերրի և արգասաբեր՝ միւսն
անապատ, մին բազմամարդ է և բոլոր ճար-
տարագործութեանց կեդրոնավայր և ցուցա-
հանդէս, իսկ միւսը նուազ բազմամարդ, և
բնակիչք կ'ապրին խաշնարածութեամբ և
որսորդութեամբ:

13.—«Երկրի մը մակերեւութին և անոր

բնակչաց նկարագրի այս մեծ տարբերու-
թիւնները կախում ունին քարերու և ապա-
ռաժներու իրարմէ ունեցած տարբերութե-
նէն:» Ուրեմն, եթէ երկրի մը ստորերկրեայ
քարերու բնութիւնը այդ երկրին բնակչաց և
անոնց զբաղմանց վիճակին վրայ այսքան
կ'ազդէ, շատ փափագելի է և հարկ անհրա-
ժեշտ, քարերու նկատմամբ աւելի հմտու-
թիւն և ծանօթութիւն ունենալու, թէ ինչ
բանէ կը բաղկանան, և թէ ինչպէս տեղ մը
հարթ դաշտավայր՝ այլուր առանձին բլուր-
ներ և երկնամարմ լեռնաշղթաներ կը յօ-
րինեն:

14.—Սակայն սոսկ համառօտ տեսութիւն
մը բաւական պիտի ըլլայ ցոյց տալ՝ զանազան
քարերու առանձին պատմութիւնը, զոր եթէ
ուսանինք՝ շատ շահեկան և հետաքրքրական
յայտնութիւններ պիտի ընեն մեզ, ծովու և
ցամաքի կանխագոյն վիճակներուն վրայ:
Աստիճանաբար պիտի տեսնենք՝ թէ երկրա-
գնտիս անցեալ պատմութիւնը մեծաւ մա-
սամբ այս քարերէն կարելի է կարգալ:

Ինչ է Երկրաբանութիւնը:

Երկրաբանութիւն կ'ըսուի այն գիտու-
թիւնը՝ որ կը ճառէ տոյս նիւթոց և կամ
մարդկային ազգի հետազօտութեան այն ճիւ-
ղին վրայ՝ որ նուիրուած է երկրիս պատ-
մութեան:

(Շար.)

Ս. Յ. ԳՐԶՂԼԵԱՆ

Գ Ի Ի Ղ Ա Տ Ն Տ Ե Ս Ս Ա Կ Ա Ն

Վ. ՆԱՍԱԿԱՐ ԹԻՉՈՒՆՆԵՐՈՒ ԴԵՄ

(Շար. թիւ 65 է.)

—o—

Բայց եթէ ճնճղուկը միայն հոռետերու և
պտուղներու աւարառութեամբ զսկանայ,
անշուշտ երկրագործը աչք պիտի գոցէր այդ-
չափ վնասին, առանց գանգատելու. արդէն
չէ՞ք գիտեր որ սերմնացանը իր արտը ցանած
ատեն, «առ ալ ճնճղուկներուն իրաւունքին»

ըսելով արտին գլուխը մէկ քանի ափ հունտ
կը սրտէ: Միայն թէ, ճնճղուկը հունտ մը
ուսեցու համար, մէկ քանի հասկեր մէկէն
կը կոտորէ, և այս կերպով իր հասուցած
փասը կարծուածէն շատ աւելի մեծ կ'ըլլայ:

Բայց աւելին կայ, քաղաքներու մօտ
գտնուող երկրագործին գանգաւոր՝ ոչ միայն
իր գիւղին մէջ ապրող ճնճղուկներուն հա-
մար է, այլ աւելի՛ քաղաքը ապրող ճնճղուկ-
ներուն, որոնք՝ դարնան ատեն, իրենց ձեռ-
նոյնները թողնելով, այդ մօտակայ գիւղերը
կը չուեն օգտւորութեան համար, և ա-
մառն ամբողջ, գեղացիին բերքերը կը թալ-
լեն: Բարիգի մէջ այս իրողութիւնը ապա-
ցուցանելու համար, մասնաւոր փորձեր կա-
տարած են, և տեսած են որ, Լիւքսէնպուր-
կի և Թիւլլըրիի պարտէզները ապրող ճնճ-
ղուկներ՝ որոց մէկ քանիին վրայ նշաններ
դրած էին, Բարիգէն մինչեւ 90 քիլօմետր
հեռու գտնուած գիւղերը գացած են, և
այն ատեն միայն վերադարձած են, երբ
արդէն հունձը, այգեկութք և վարուցանք
վերջացած են, որ ըսել է, նոյնմբերի սկիզբ-
ները: Իրենց ամենէն աւելի նախատիրած
հունտերն են ցորեն, գարի, վարսակ, հա-
ճար. բանջարեղէններու և ծաղիկներու հուն-
տերն ալ չեն մերժեր. բայց մանաւանդ,
կեռասի, ելակի, հաղարջի ժամանակ է որ
ամենէն աւելի փնտրակար կը դառնան. թէ և
այդ մրգեղէններէն վերջը հասնող դեղձերը,
ծիրանները, տանձը, խնձորը ևլն. ալ չեն
մոռնար. և հուսկ՝ իրենց այս ամառնային
գիւղաբնակութեան միջոցին կատարած շա-
հատակութիւններն կը վերջացնեն խաղողի
առատ յղիացումներով, և ապա կու գան
ձմերել կրկին քաղքին տանիքներուն տակ,
կամ պատերու ծերպերուն մէջ:

Քանի մը տարիներ առաջ, Ֆրանսայի
Սէն Նազանգի կուսակալութիւնը որոշած էր
խուզարկութիւն մ'ընել հասկնալու համար
թէ, ճնճղուկները ոչնչացնել պէ՞տք է թէ
ոչ. ուստի բոլոր չրջակայ քաղաքապետու-
թեանց չրջաբերականներ զրկուեցան. բայց
ատենք ուղղակի պատասխան մը տալէ առաջ,
գիւղատնտեսական ընկերութեանց և երկ-
րագործներու կարծիքը առած են: Եօթանա-
սուն և չորս գիւղերու մէջէն, 68ը միայն պա-
տասխանած են, և որոց 46ը կողմնակից

գտնուած են ոչնչացնելու գաղափարին (ուր՝
ամենէն աւելի մշակութիւնները տարածուած
են). 17 գիւղեր չեղօք գտնուած են, և 5
գիւղեր միայն հակառակած են այդ որոշու-
մին: Այս վերջի գիւղերու մէջ հազիւ թէ
մշակութիւն կը կատարուի:

Հասկցնելու համար թէ, միայն ցորենի
հունձքին ժամանակ որչափ փնտս կու տան
ճնճղուկները, հոս կը դնենք վերոյիշեալ տե-
ղեկագրութիւններէն քաղուած մը:

Սէնդ-ուէն 100ին 10ը.—Պօնտի 100ին
13.—Նուազիւլը-սէք 15.—Պուի-սիւռ-մառն
25.—Ռօմէնվիլ 33.—և խիստ շատ անգամ-
ներ, Շըվիլի և էրինէյի մէջ՝ 100ին 50,
և այլն, և այլն:

Նոյնպէս հաշիւ եղած է որ, սովորական
տարիներու մէջ, տարեկան 5000 ֆր.ի փնտս
կը պատճառեն ճնճղուկները՝ Պօնէյի երկ-
րագործներուն. 9,700 ֆր.ի՝ Շաթընէյի.—
5,500 ֆր.ի՝ Շաթիյետն-Սու-Պանէէօ.—
31,600 ֆր.ի՝ Գօլօմպի. և 20,470 ֆր.ի
Գուուպըվուաի երկրագործներուն: Սէնի գա-
ւառը 4,000 էքդառ (մէկ էքթառը հաւասար
է գրեթէ 10 տեղական արտավարի) տարածու-
թեան վրայ, 100,000 էքդօլիդր ցորեն կ'ար-
տադրէ. վերոյիշեալ ցուցակէն հետեւցնելով,
վեր ի վերոյ, ճնճղուկները 10 առ հարիւր
կ'ոչնչացնեն. ուրեմն՝ մէն մի էքդօլիդր 15 ֆր.-
ենթադրելով, տարեկան 150,000 ֆրանքի
փնտս մը կը հասցնեն Սէնի երկրագործներուն:

Ուրեմն՝ ճնճղուկը երկրագործութեան
համար փնտսակար թռչուն մ'ըլլալուն այլ
ևս ո և է տարակոյս չի մնար, և եթէ զայն
ոչնչացնել ալ չուզենք, գէթ ջանալու ենք
հեռացնել մշակութեանց վայրերէն:

Քրտուկակները՝ ինչպէս ըսինք, այնչափ
ազդու միջոցներ չեն: Արդէն շատ անգամ-
ներ, այդ սրամիտ թռչնիկները նոյն իսկ
մարդէն անգամ չեն քաշուիր, և անոնց ներ-
կայութեանը միշտ իրենց ընելիքը կ'ընեն ա-
ռանց քաշուելու, մինչեւ որ ներկայ եղող
մարդը՝ դէպ իրենց շարժում մը չընէ:

Ումանք կը յանձնարարեն, ցանուելիք
հունտերը կարմիր որիկոնի (մինիմ=սիւլիւ-
յէն) փոշիով խառնել, որ հետեւեալ կերպով
կ'ըլլայ: Մեծ կակ սլարկի մը մէջ կը լեցնեն՝
20 քաշ ցորեն, և 1 քաշ ալ սրիկոն. պար-
կին բերանը կը կապեն, և վեր վար կը շար-

ժեն՝ մինչեւ որ բոլոր հատիկները կարմիրն, ուրիշ վերջը կը ցանեն։ Ոչ միայն թուշունները չեն ուտեր այս հունտերը, այլ և արտէն հեռանալէն զատ, ուրիշ շատ մը միջատներ ալ չեն մօտենար անոնց։

Թէև մէնք խորհուրդ չենք տար ճնճղուկներու ցեղը բոլորովին ոչնչացնել, բայց անհրաժեշտ կը նկատենք, որ ամէն տարի գէթ մասամբ անոնց թիւը պակսեցնել աշխատութիւն։ Ուստի՝ այս առթիւ հետեւեալ գործնական միջոցները կարելի է կիրարկել։

Շաքարախառն օլիի մէջ, 2-3 ժամ մէկերկու քաշի չափ ցորեն կամ հաճար թրջոց դրէք։ յետոյ այս հատիկները խառնեցէք ցորենի կճեպներու (գոպճըք) հետ, այնպէս որ՝ ափ մը կճեպի մէջ հազիւ 5-6 հատիկներ գտնուին։ յետոյ ցանեցէք այս կճեպները արտին մէջ՝ տեղ տեղ։ Ճնճղուկները այս քաղցրահամ հատիկներէն շատ կ'ախորժին, և մէկ քանի հատ ուտելուն պէս, կը թուլնան իրենց ընկերակցութիւններուն մօտ, և կ'ալ կը ծեծկուին անոնց արուններուն հետ։ Բայց երկու պարագային մէջ ալ, կատարելապէս կը մոռնան վտանգի ծանօթութիւնները, այնպէս որ, այն տառն կրնաք հանդարտօրէն մօտենալ անոնց, և ձեռքով բռնել։

Իտալիոյ մէջ ալ ուրիշ դրութիւն մը կը կիրարկեն, որ ոչ նուազ յանձնարարելի է։ Արտերուն մէջտեղուանքը, կամ յարմարագոյն տեղերը փոքրիկ աշտարակներ կը շինեն, փայտէ կամ քարուկիր, որոց չորս կողմը պզտիկ ծակեր կը թողուն։ Ճնճղուկները անոնց մէջ բոյն կը դնեն, և երբ իրենց թիւը շատնայ, այն տառն դիւրաւ կը բռնեն զանոնք՝ մասնաւորապէս գիշեր ատեն։ Եւ որովհետեւ ճնճղուկներու միտով համադամ կերակուրներ կրնան պատրաստուիլ, կրկնակի չափ մը ձեռք կը բերուի այս միջոցով։ Իտալիոյ մէջ հատը 20 փարայ կը ծախուի, որով բաւական կոկիկ հասոյթ մը ձեռք բերած կ'ըլլայ երկրագործը, առանց կարեւոր ձեռնաշխատութիւն մը վատնելու։ Հիմա եւրոպայի մէջ, շատ մը երկրագործներ այնչափ չահաւոր գտած են ճնճղուկ հասցնելու այս խնայողական միջոցը, որ բոլորովին նապաստակալ բուծանելը մէկ կողմ դրած այլ ևս, ճնճղուկ բուծանելու կ'զբաղին։ Իտալիոյ

մէջ, այս ճնճղուկի առուտուրէն, տարեկան 150-200 տոկի զուտ հասոյթ արտադրող երկրագործներ կան։

Քանի որ ցանաւած հունտերը թուշուններու դէմ պաշտպանելու վրայ գրեցինք, օգտակար կը դատենք նաեւ հետեւեալ միջոցն ալ ցոյց տալ, զոր կը կիրարկեն շատ տեղեր։

Առէք 100 արամ քարիւղ (կաղ)

10 քաշ պարզ ջուր, և

50 տրամ խայծղան (քաթրան)

ջուրը եռացուցէք, քարիւղը մէջը խառնեցէք, յետոյ լեցուցէք խայծղանին վրայ, փայտով մը խառնեցէք իրարու։ Ցանուելիք ցորենը կը լեցնէք այդ խառնուրդին մէջ (պաղելէն, երջ անշուշտ), աղէկ մը կը խառնէք, մինչեւ որ բաղադրութիւնը հունտերուն երեսը պատէ։ յետոյ կը պարպէք, և քիչ մը չորնալէն վերջ կը ցանէք։ Ահա այս կերպով պատրաստուած հունտերուն ոչ միայն ագռաւները չեն դալիր՝ անոնց արտացոլած անախորժ հոտին պատճառաւ, այլ և ուրիշ փաստակար միջատներ անգամ կը հեռանան անոնց մօտէն։

Ղ. ԲՈՂԱՏ

Մ Ե Ղ Ո Ւ Ա Բ Ո Ւ Ծ Ա Կ Ա Ն

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. թիւ 65 էն)

—o—

Մենք տեսնելով որ սոյն փեթակը ունենալով՝ չպիտի կրնանք մեղուներու ներքին աշխատութիւնը ազատօրէն դիտել, պատրաստեցինք փեթակ մը որուն երկու կողմերը և ետեւի կախարիչին վրայ ապակի անցընելով, մեր փափաքին հասանք։ Չը մոռնանք ըսելու որ, ապակիին վրայ, զատ շարժուն տախտակով կամ սե ատուխով գոցեցինք, որպէս զի մեղուները լոյսէն չնեղուին։

Նաեւ մեղուներուն վրայ կատարուելիք

աշխատութիւնը քիչ մը ևս դիւրացնելու համար, փորձեցինք ամերիկացի Լէնկոթրոթ քաղաքացին շինած փեթակին պէս, վրայէն չարժական տախտակներով շրջանակներ անցնել՝ փեթակին մուտքին լայնութեան ուղղութեամբ. սակայն տեղական մեղուներուն տեսակը տարբեր ըլլալով, իրենց քերթերուն շինութիւնը փոխանակ դրան ուղղութեամբ կատարելու, մի քիչ շեղակի կը հաստատեն, այնպէս որ փոքր դժուարութեան մը մատնուեցանք այս մասին:

Երբեմն մեղուաբոյծներ կուզեն մեղր չափ քաղել. բայց յաճախ գաղթականութիւններ ունենալով չեն յաջողիր: Այս մասին փորձեցինք և յաջողեցանք: Ահա թէ ինչպէս: Ապրիլ ամսուն մէջ երբ մեղուներուն ձագ հոնելու ժամանակը կը մօտենայ, փեթակին կափարիչին չափ կամ դիւրութեամբ մտնելու համար քիչ մը նեղ տախտակ մը կը հաստատենք ճիշտ մէջտեղը, և կամ քիչ մը ևս. ու այնպէս կը թողունք: Պէտք է տախտակին ետեւը քերթ չը կենայ սակայն: Մայիսի մէջ կամ սկիզբը՝ երեկոյին սրելուն մարդ մտնելէն վերջ, փեթակին ետեւէն ականջ դնելով, հետամուտ կ'ըլլանք թէ սուր բզկիւններ կ'եննեն, նաև ցերեկուան մօտ արու մեղուները մեծ իրարանցումով դուրս կ'եննեն օդին մէջ: Երբ ասոնք տեսնենք, յայտնի է թէ, մեղուներուն մէկ մասը քիչ օրէն պիտի գաղթեն. ուստի ապրիլին՝ փեթակին մէջ դրած տախտակինս կը հանենք, և ետեւի կափարիչը կը գոցենք դարձեալ: Այն ատեն մեղուները ընդարձակ բնակարան տեսնելով չեն գաղթեր և կ'սկսին քերթ շինել ու մեղր հաւաքել:

Առատ մեղր ունենալու համար, ուրիշ յաջող փորձ մ'ալ ըրած ենք մայր մեղուներուն բջիջներուն վրայ, որուն մասին պիտի խօսինք յաջորդիւ: Փեթակներուն վրայ այս քանը բաւ համարելով՝ անցնինք Բ. մասին:

Բ.—Ներքին ԿԱԶՄՈՒԱԾՔ ՓԵԹԱԿԻ

Ջարմանալի է տեսնել որ, հազարաւոր մեղուներ միեւնոյն բնակարանին մէջ կատարեալ համերաշխութեամբ կ'աշխատին: Մեղուներու ընտանիք մը կրնանք նմանցնել

բազմաժողով ընտանիքի մը, որուն անդամները սիրով ու միաբանութեամբ կ'ապրին ու կ'աշխատին՝ առանց վերին հրամանատարի մը. որովհետեւ թէև ունին իրենց նախագահը, այսինքն մայր մեղուն, բայց իւրաքանչիւր մեղու, նախագահէն անկախ՝ իր սեփական աշխատութիւնը կը կատարէ: Ասոր հետ մէկտեղ, եթէ մայր մեղուն վտանգի մը մէջ իյնայ, սիրով և յօժարութեամբ կը գահեն կեանքերին անոր ազատութեան համար. կամ եթէ կորսուած ըլլայ, շուտով ուրիշ մը կ'ընտրեն իրենց մայր, թէև երբեմն դիւրութեամբ չեն յաջողիր:

Փեթակի մը կամ ընտանիքի մը մէջ կայ երեք տեսակ մեղուներ. Ա. մայր մեղու, Բ. գործաւոր մեղուներ, Գ. արու մեղուներ: Մայր մեղուն՝ որ հին ատենները և նոյն իսկ հիմա ռամիկ դասակարգը «Թագուհի» կամ «Թագաւոր, պարոն» ևլն. սխալ անուններով կը կոչէ, պաշտօն ունի միայն հաւկիթ ածելով քերթերուն մէջ գետեղելու: Հ. Բաջուհի կ'ըսէ թէ՝ մայր մեղուի մը ածած ձուերուն քանակը կը հասնի տարին 40,000էն մինչև 100,000ի, և երբեմն ալ մինչև և հինգ հարիւր հազար և աւելի՝ եթէ պարսամայրը կամ մայր մեղուն երկարակեաց և առողջ ըլլայ: Այս մեղուն սովորականէն քիչ մը մեծ է, մէջքէն վար դեղնագոյն, ու միւս կողմերը ողորկ և փայլուն են: Թեւերը պզտիկ են բաղդատմամբ իր մարմինին. երբ ծերանայ՝ գոյնը սեւի կը փոխուի: Գործաւոր մեղուները պաշտօն ունին ներքին ամէն աշխատութիւնները կատարելու, ձագեր խընամելու, մեղր հաւաքելու, քերթ շինելու և այլն և այլն: Այս մեղուները չափ դիւրութեամբ կը ճանչցուն, հասակաւ պզտիկ են, և թւով ամենէն շատ: Իսկ արու մեղուները ուրիշ բան չեն ընէր, բայց միայն ջուր կը բերեն (սագայ). նաև պաշտօն ունին էգ մայրը բեղմնաւորելու: Բայց մէկ արու մը բաւական է այս մահալից գործին համար: Արուները գործաւոր մեղուներէն չը տարբերին իրենց մարմինին խոշորութեամբ և սեւութեամբ: Ասոնք խայթոց չունին բնաւ: Թռչելու ատեն աւելի մեծ ձայն մը կը հանեն քան գործաւոր մեղուները: Առաւ ատեն կամ ձմեռուան մօտ գործաւոր մեղուներէն կ'սպաննուին ու փեթակէն դուրս կը

հանունն ասոնք. որովհետեւ՝ պարապ տեղը՝ գործաւոր մեղուներուն կերածին կրկինը ուտելով՝ պաշարը կ'սպառեն: Հարկ է որ մեղուաբուծները օգնեն մեղուներուն այս ոչընչացումին:

Մեղուներու բնակարանին մէջ՝ արունքուն, գործաւոր մեղուներուն և մայր մեղուն ըջիջները տարբեր տարբեր են: Արունքներուն աւելի խոր և աւելի մեծ են՝ քան գործաւոր մեղուներունը: Իսկ մայր մեղուն ըջիջը կ'ըլլայ սովորականէն տարբեր և զատ տեղ, ինչպէս ջերմերուն եղբայրները: Մասնոցի մը ձեւն ունի, բայց բերանը աւելի նեղ՝ որ երթալով կը գոցեն:

Մայր մեղու մը կ'սպարի գրեթէ 3—4 տարի, անկէ վերջ կը ծերանայ և սպառելով կը մեռնի: Պէտք է մեղուաբուծ մը այս պարագային ուրիշ դեռատի մայր մը տայ՝ փեթակին մեղուներուն: Այս գործաւորները սակայն կ'արժուածին չափ դիւրին չէ: Ահա մենք տախտակէ փեթակներուն վրայ կատարած ենք հետեւեալ կերպով, մասամբ Հ. Քաջունիի գծած մեթոտին հետեւելով:

Առաջին անգամ կը դիտենք թէ՝ ո՞ր ընտանիքը աւելի զօրաւոր և բազմաթիւ է: Մայրսի սկիզբները երբ մայր մեղուներուն հաւկիթները կերսարանափոխուելով թրթուրէն հարսնեակ եղած են, մեր դիտած զօրաւոր փեթակին ետեւի կափարիչը կը բանանք, և մայր մեղուներուն ըջիջներուն մէջէն մեղմով հարսնուկներէն կ'առնենք. թեւէ հիւսուած պզտիկ ամանի մը մէջ կը պահենք 24 ժամ, կամ երկու օրի չափ: Կը դնենք նաեւ քովը մեղրով լեցուած ջերմ մը և քանի մը գործաւոր մեղուներ:

Եւ.

Պարտիզակ

Գ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐ ԵՒ ԺԷՆԱՆԵԱՆ

(Պարագանի Բեռնար-Բիան Է)

5 յուլիա 1899 (Ն. Տ.)

Պատ. «Բիւզանդիոն»ի 757 և 758 թիւերուն մէջ կարդացուեցաւ «Սահակ» ստու-

րագրութեամբ Ամերիկայի Նիւ-Հէյվըն քաղաքէն 27 մարտ 99ին գրուած յօդուած մը, որուն մէջ ուզուած էր նկարագրել մի քանի թրքահայ բողոքական պատուելիներու և ամերիկեան միսիոնարաց ուղղութիւնը «Տէրութը խօսքին» գործին մէջ:

Յօդուածին մէջ յիշատակուած թրքահայ պատուելիներէն մեզ մօտէն ծանօթ չեղողներուն վրայ բան մը չենք կրնար ըսել. սակայն քաջ կը ճանչնանք անոնցմէ երկուքը, Պատ. Ճէնանեան և Հայկազեան Էֆ.ները: Արդ՝ քանի որ Հայկազեան Էֆ.ին վրայ բան մը չէր գրուած, միայն Այնթապի նամակով իրեն եղած պաշտօնի հրաւերէն զատ՝ որ անշուշտ պատիւ կը բերէ իրեն, աւելորդ պիտի ըլլար երկարօրէն գովաբանել հաս այս տաղանդաւոր, զգոնամիտ, գիտնական երիտասարդին ճշմարիտ արժանիքը. իսկ Ճէնանեան Էֆ.ին համար, Պ. Սահակ թէւ իր կողմէն նոյնպէս ուղղակի բան մը չի գրեր բնաւ, բայց յառաջ կը բերէ ամերիկեան Պօրտի պաշտօնական թերթին մէկ յօդուածէն հատուած մը միայն, զոր կ'ուզենք թեթեւ քննութեան մը բովէն անցունել՝ աւելի բացառաւորութեամբ անոր ներքին պատճառն ու նպատակը:

Ամերիկացի միսիոնարներ՝ որ թուրքիոյ մէջ կը շահագործեն իրենց բարեսիրտ հայրենակիցներուն կրօնասիրական պարգևութիւնը, առաջուց ի վեր ցուցուցին անոնց՝ մեր երկիրը իբր բարբարոս, և մեր ազգը՝ իբր հեթանոս, և այս կերպով բարձրացուցին, ստուարացուցին անոնց առջեւ իրենց կատարած գործին կարեւորութիւնը, արժէքը, վարձքը. տեղեկագիր տեղեկագրի ետեւէ շրջանին հոն՝ որոնք կը ներկայացնէին Տէրութը գործին համար իրենց կրած ծանր տառապանքները, անտանելի հալածանքները, տառապանքի աշխատանքները (։։։): Ինչ, միթէ դիւրին բան է Տէրութը խօսքը քարոզել այնպիսի վայրերի երկրի մը մէջ՝ որ . . . Թագէտս ու Բարթոլոմէոս տառաքեալներու ժամանակէն սկսեալ, ի սէր Բրիտանիայի, անձնազոհ նահատակեալներու արեամբ և մարմնով դրած է իւր քրիստոնէական Ս. Եկեղեցւոյն հիմունքը, և այնչափ դարերու ընթացքին մէջ զայն կանգուն և հաստատուն պահելու համար անպատում և անհատնում դժուարութ-

թեանց հանդէպ ցուցուցած է ցարդ այնպիսի հիմնադրի տոկոսութիւն մը՝ զոր գուցէ չափաւր ունենային իրենք, եթէ երբէք ազգովին պատահէին շարունակ նոյնօրինակ դժբաղդութեանց. ազգովի բան է միթէ բնագոնիլ տալ Աւետարանը ժողովրդի մը՝ որ... ի վաղուց կը պաշտէ զայն, և իրենցմէ ոչ նուազ հաւատարիմ է անոր բարոյական սկզբունքներուն:

Հարկ չեմ համարիր մանրամասն նկարագրել, թէ միսիոնարք ինչպիսի ջնջին ու պատիր բաները օգտակար, կարեւոր, մեծ գործեր կը ցուցնեն իրենց տեղեկագիրներուն մէջ, և մանաւանդ՝ թէ, ո՛չ թէ իրենց ցուցածածին պէս տաղնապ, նեղութիւն, այլ ո՛ր և է թուրքիացիէն ո՛րչափ տաւրի յարգանք և համագոտութիւն կը վայելեն, և ամէն կերպով բարեկեցիկ ու երջանիկ կեանք մը կը վարեն հոս՝ զոր գուցէ չափաւր ունենային իրենց հայրենի երկրին մէջ:

Թուրքիոյ միսիոնարներն, իրենց դիւրակեցութիւնը ապահովելու գործը՝ «Տէրոջը գործին» շնորհիւ, այս կերպով յաջողապէս ի կատար հանելէ յետոյ, բնականապէս կայքը եկաւ որ ի հարկէ Զանան այդ դիւրակեցութեան «ապագան» ապահովելու, և ձեռքէ չհանեն այդպիսի բաղդ մը: Առ այս յաջողիլ ուզեցին՝ Թուրքիացի կարող անձերը միշտ ստորին վիճակի մէջ պահելով, կամ զանոնք գործունէութեան շրջանակէն դուրս վտարելով, անոնց ձեռնարկներուն առջեւ արգելքներ հանելով, և զանոնք անձարակ, չար, խորամանկ, անհաւատարիմ ցուցնելով իրենց հայրենակից բարեմիտ խաբածներուն (duple):

Այսպէս ալ ըրին. և ահա՛ աստի ծնաւ միսիոնարներու կողմէն, Թուրքիացի կարող պատուելիներուն դէմ շարունակական առեւթիւն մը, որուն հայրը նախանձ և մայրը շահագիտութիւն է. այս պատճառաւ է որ «Կեդրոնական Թուրքիոյ միսիոնարութիւնն ալ մասնաւոր ժողովով որոշած էր բնիկ պատուելիներու այս (բարեգործական նպատակներով դրամ հաւաքելու) արարքը կասեցնել Ամերիկայի մէջ, և չընթերցական մը հանած էր»: և ամերիկեան Պօրտի ընկերութեան թերթը՝ անոր այս միսիոնարներուն նենգամիտ, գժուձ թելադրութիւններէն ներշնչուե-

լով է՝ որ կ'ըսէ հաւատալ թէ՝ «Առանց ամերիկեան ո՛ր և է հաստատութեանց վերին հրահրութեան, բնիկ գործիչներու ձեռքով կառավարուած անկախ ձեռնարկներ տալէն չեն կրնար ըլլալ», և կը յայտարարէ թէ «Հոգիները չթողաւորեն Հայոց, որ իրենց թեմերն եղնեն մուրալու համար»:

Կարծեմ թէ մինչև հոս համամիտ է մեզ յարգոյ յօգուածագիրը՝ Պ. Սահակ: Ճշմարիտ է նաև որ այս ընդհանուր՝ բոյց անիրաւ, անարգ տոեղութեան սահմանէն դուրս չէր կրնար մնալ, և մանաւանդ ամենէն աւելի անոր նշաւակ պիտի ըլլար անշուշտ ձէնանեան, քանի որ Թուրքիացի պատուելիներուն ամենէն մեծագործն է: Պարտ է գիտնալ նաև թէ՝ միսիոնարներու մէջ ալ կը գտնուի փոքրամասն բացառութիւն մը, և մեր բոլոր խօսքերը չեն վերաբերիր անոնց՝ որք ճշմարտապէս բարի և իրենց կոչման հաւատարիմ են:

(Շար.)

ԿՇԻՌ

ԱՐԶԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ՊՈՂՊԱՏ

Պատմական և ընդհանուր տեսութիւն. — Պատմութեան. — Գործածութիւն. — Իր տեսակները, և ասոնց ուրոյն յատկութիւնները:

(Շար. թիւ 65 էն)

—o—

Այս արհեստի մանկութեան մէջ, արտադրութեան բնութիւնը անտարակոյս արհեստաւորին կամ գործաւորին կամքէն կախում չունէր, այլ ինչ որ ձեռք բերուէր, ըստ դիպաց էր պարզապէս: Քրիստոսէ մէկ դար վերջ, Նօրիքի (Պ) պողպատը շատ կը գնա-

(Պ) Այժմ Սգիրական երկիր, որ Աւստրիոյ մէկ նահանգը կը կազմէ Ագրիական ծովու եզերքը, և միշտ իր երկաթի արտադրութիւններով նշանաւոր է, ինչպէս Թրիէսդէի երկաթը, որ արտասովոր կակղութիւն մ'ունի, նեարդային կազմուածքով:

հտուութիւնը. Սպանիականը՝ և ի մասնաւորի Պիսագանականը՝ երկար տոններ հռչակաւոր մնացած են. մինչեւ 18րդ դար՝ Պիլպատ և Գալաթէյիւտ (սպանիական երկիրներ) ամենէն ընտիր և նրբին պողպատները կը մատակարարէին վաճառականութեան, որիկէ վերջ, Գերմանիա, յետոյ Անգլիա սկսան գերազանցել իրենց պողպատներու ընտրութեամբ: Ամրոցը միջին դարը անցած է, պողպատի պատրաստութեան եղանակներուն վրայ առանց կարեւոր կատարելագործութիւն մ'ըլլալու:

Շարժան պողպատի գիւտը՝ 17րդ դարուն վերջերը եղած է, և ձուլածոյ պողպատը հնարուած է 18րդ դարու մէջ, Արդէն՝ ցորչոյի պողպատի գործածութիւնը սահմանափակուած մնաց մի միայն գործիքներ՝ և համեմատաբար փոքր զանգուածով առարկաներ չինելու մէջ, իր պատրաստութեան համար, աւանդաբար գործածուած գրութիւններն ալ անփոփոխ մնացած են, հետեւաբար և միշտ ոչ-գիրամատչելի գներով: Սակայն ճարտարագիտութեան մէջ, յառաջդիմական շարժումները հետզհետէ ընդլայնուելով, և երկաթին սեղ պողպատի գործածութեան անհրաժեշտ պէտքի զգացողութիւնը վերջապէս, որ մեր դարու ձգտումներն եղած են, այս անշարժութիւնը դադարեցնելով, հարկադրած են հնարագէտները՝ Լլօրէն գրադելու այս խնդրով: Պողպատի կարծրութիւնը, երկաթէն շատ աւելի գիմացկութիւնը, և միտումով նոր յատկութիւններ ստանալու բնութիւնը՝ գերազանց պատճառներ եղած են, որ իրաւամբ՝ երկաթէն աւելի՝ և անոր տեղ գործածուի երկաթուղիներու, հրետանիներու, մեքենական, և նոյն իսկ հանրային շինութեանց մէջ: Այս բազմազան կիրարկութիւնները սակայն՝ այն ատեն կարելի կ'ըլլար իրագործել, երբ իր գինը զգալապէս նուազելով, երկաթին հետ մրցելու աստիճան աժան հայթայթուէր. ինչ որ ալ ձեռք բերուեցաւ 1850էն առդին: 1851 թուականին՝ արդէն Անգլիոյ մէջ, 177 մենաշնորհներ տրուած էր, պողպատի պատրաստութեան եղանակներու կատարելագործման համար: Թողունք հոս սակայն պատմական ուսումնասիրութիւնը, և անցնինք բացատրելու թէ՛ ինչ է հապէս պողպատը:

Քիմիագիտութիւնը գոյն երկաթի բնածուակ (carbure de fer) կը կոչէ, որովհետեւ իր մէջ՝ հալարին 6էն 7 բնածուխ կը պարունակէ, և բնածուխի այդ ամենափոքր քանակութիւնն է որ, երկաթին հետ միախառնուելով, այս վերջինին յատկութիւնները կը փոխէ, բոլորովին նոր յատկութիւններ յառաջ բերելով: Զուտ երկաթին մէջ ամենեւին բնածուխ չի գտնուիր. իսկ ձուլածոյ երկաթը կը պարունակէ մինչեւ 100ին 2էն 7, կակուղ ձուլածոնէր, որ թուի գոյն մ'ունին, գիւրաւ կը հալին, և կը խարտուին, կը պարունակեն 100ին 5էն 7, և կարծր ձուլածոնէրն ալ 100ին 2էն 4. որոնք՝ ինչպէս գիտենք, գծուարաւ կը հալին, և գծուարաւ կը խարտուին: Ըսել է, բնածուխը երբ խիստ փոքր քանակով երկաթին միանայ, անոր արտաուովոր կարծրութիւն մը կու տայ. բայց երբ իր քանակը համեմատաբար շատ ըլլայ, այն ատեն ալ անոր կակուղութիւն մը կու տայ, թէ և միւսնոյն ատեն ալ զայն դիւրաւիւտուր ընելով:

Պողպատը խիստ չողջողուն է, և յղիւեւում գեղեցիկ փայլունութիւն մը կ'ստանայ. խիստ կռանելի, հետեւաբար և խիստ տարածական, խիտ և նրբին հատիկներով կապմունք: Երկաթին պէս գծուար՝ բայց անկէ քիչ մ'աւելի դիւրութեամբ կը հալի. մագնիսական ասեղէն կը քաշուի, և կակուղ երկաթէն այն առաւելութիւնն ունի որ, երբ երկար ատեն մագնիսի մը կառչած մնայ, կամ բաւական ատեն եթէ մագնիսի կտորով մը շփուի, ինք ալ կը մագնիսանայ: Երբ պողպատը չափազանց տաքցնենք, և թողունք որ կամաց կամաց պալի, իր նախկին բնական յատկութիւնները կը վերստանայ. բայց երբ տաքցնելէն անմիջապէս վերջը յանկարծակի պաղեցնենք, այն ատեն բոլորովին նոր յատկութիւններով կ'օժտուի. կ'ստանայ առաձգութիւն, կարծրութիւն, դիւրաւ կը կտորի, նուազ կռանելի և նուազ տարածական կ'ըլլայ: Այս յանկարծական պաղութիւնը յառաջ կը բերեն ընդհանրապէս, պողպատը ընկղմելով կամ մխելով մեծ քանակով ջուրի, սնդիկի, իւղի, և կամ հարած վիճակի մէջ գտնուող կարծր նիւթի մը մէջ, զորս պիտի տեսնենք յաջորդաբար:

Շար.

Ղ. ԲՈՒԱՏ

ԹԵՐԹՈՆ «ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»Ի

(16)

ՃԻՆԱ ՎԵՐՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

Խօսակցութիւնը գիտական խնդիրներու վրայ դարձաւ, ինչպէս որ պատշաճ է գիտուններուն. բայց բրոֆէսէօր Լիտէնպորք բոլորովին ձեռնպահ մնաց, և իւրաքանչիւր պարբերութեան իր աչքերը բացարձակ լուծութիւն կը պատուիրէին ինծի, մեր ծրագիրներուն նկատմամբ:

Նախ Պ. Ֆրիտրիքսըն հարցուց մօրեղբորս թէ՛ մատենադարանին մէջ ըրած հետազոտութիւնները ի՞նչ արդիւնք ունեցած էին:

«Ձեր մատենադարանին դարակները միայն եւ անոնց մէջ զուգատուած հատորներ միայն կան, պատասխանեց բրոֆէսէօր Լիտէնպորք:

— Ինչպէ՞ս, պատասխանեց Պ. Ֆրիտրիքսըն, ութ հազար հատոր գիրք ունինք, որոնց մեծ մասը հազուադիւրս ու թանկագին են. հին սքանտինավեան լեզուով գործեր և Գորէնհալի վերջին նորութիւնները:

— Ո՞ր տեղ ութ հազար հատոր գիրք կայ, հո՞ն: Իմ հաշուով...

— Օ՛հ, Պարոն Լիտէնպորք, գրքերը երկրին մէջ տարածուած են. ուսման ճաշակ կայ մեր հնաւուրց սառայցէ կղզիին մէջ: Ձկայ սգարակապան մը, ձկնորս մը որ կարգալ գրել չգիտնայ: Մենք կը խորհինք որ, գրքերը երկաթէ վանդակապատին ետեւ նայուածքներէ հեռու բորբոսելէ աւելի՛ սահմանուած են ընթերցողներու աչքին ներքեւ մաշելու: Այսպէս՝ այդ հատորները ձեռքէ ձեռք կ'անցնին, կը թղթատուին, կը կարգացուին, և վերստին կը կարգացուին ու չափ անգամ մէկ կ'ամ երկու տարիէն իրենց տեղը կը դարձուն:

— Հապա՞ օտարականները..., պատասխանեց մօրեղբայրս տհաճութեամբ:

— Մեր ինչո՞ւն պէտք, օտարականները մատենադարաններ ունին իրենց երկրին մէջ,

ամէն բանէ առաջ մեր գիւղացիները ուսումնի պէտք ունին: Նորէն կը կրկնեմ՝ Իսլանտական արիւնին մէջ ուսման սէր կայ: 1816ին հիմնած ենք գրական ընկերակցութիւն մը որ լաւ կ'ընթանայ. օտարազգի գիտուններ պատիւ կը համարին իրենց՝ այդ ընկերակցութեան անդամակցելու, որուն նպատակն է Իսլանտացիներու դաստիարակութեան սահմանուած գրքեր հրատարակել, և օտու գիւմինչու այսօր ճշմարիտ ծառայութիւններ կը մատուցանէ երկրին: Եթէ երբէք յաջող գգաք մեր թղթակից անդամներէն մին ըլլալ, ամենամեծ հաճոյք մը պատճառած պիտի ըլլաք մեզի:

Մօրեղբայրս որ հարկը գիտական ընկերութեանց անդամ էր արդէն, բարեհաճութեամբ ընդունեց այդ առաջարկը, որմէ զգածուեցաւ Պ. Ֆրիտրիքսըն:

«Հիմա, յարեց այս վերջինը, հաճեցէ՛ք նշանակել այն գրքերը՝ զոր կը յուսայիք մեր մատենադարանին մէջ գտնել, թերեւս կարենամ անոնց մասին տեղեկութիւն մը տալ ձեզի»:

Դիտեցի որ մօրեղբայրս կը վարանէր պատասխանելու: Ուղղակի ծրագիրներուն հետ աւնչութիւն ունէր ատիկա: Բայց քիչ մը խորհելէն յետոյ որոշում տուաւ խօսելու:

«Պ. Ֆրիտրիքսըն, ըսաւ, կ'ուզէի գիտնալ թէ Առն Սաքնիւսէմի գործերէն կա՞յ արդեօք այդ հին գրքերուն մէջ:

— Առն Սաքնիւսէմ, պատասխանեց բրոֆէսէօր Ֆրիտրիքսըն. սա տառնեմեցերորդ դարու գիտունին համար կ'ըսէ՞ք, որ միանգամայն մեծ բնապատում, մեծ ալ քիմիագէտ ու մեծ ճանապարհորդ մը եղած է:

— Ճիշդ անիկա:

— Իսլանտական գիտութեան ու գրականութեան փառքերէն մին, այնպէս չէ՞:

— Այո՛:

— Հռչակաւոր անձ մը:

— Համակարծիք եմ:

— Եւ որուն յանդգնութիւնը կը հաւասարէր իր հանճարին:

— Կը տեսնեմ որ լաւ կը ճանչնաք այդ գիտունը»:

Մօրեղբայրս ուրախութենէն կը թռէր այդ խօսքերը լսելով իր հերոսին վրայ: Աչքով Պ. Ֆրիտրիքսընը կը լափէր:

«Իր գործերը, հարցուց մօրեղբայրս :

—Ա՛հ, իր գործերը չունինք :

—Ի՛նչ, Իսլանտայի՞ մէջ :

—Ո՛չ Իսլանտայի մէջ եւ ո՛չ ալ ուրիշ տեղ :

—Ինչո՞ւ համար :

—Որովհետեւ Առն Սաքնիւսէմ իբր հերե-
տիկոս հալածուելով՝ 1573ին դահճին ձեռ-
քով իր գործերը այրուած են Բոթենհակի
մէջ :

—Շատ ճշմարիտ է, գոչեց մօրեղբայրս,
ի մեծ գայթակղութիւն բնական պատմու-
թեան բրոֆէսէօրին :

—Հը՛մ, Երաւ այս վերջինը :

—Այս ամէնը կը լուսարանուի հիմա, կը
չղթայուի ու կը պայծառանայ. հիմա կ'ըմ-
բռնեմ թէ ինչո՞ւ համար Սաքնիւսէմի գրքե-
րը Հռոմի գրադարանին մէջ է ընդունուած.
ահա՛ այս պատճառով գիտունը բռնադատ-
ուած էր իր հանճարին գիւտերը ծածկելու,
եւ անհասկնալի ծածկագրի մը մէջ պահելու
իր գաղտնիքը...

—Ի՛նչ գաղտնիք հարցուց Պ. Ֆրիտրիք-
սըն աշխուժով :

—Գաղտնիք մը... որուն, պատասխանեց
մօրեղբայրս թոթովելով :

—Մասնաւոր վաւերագիր մը ունի՞ք մի-
թէ, յարեց մեր հիւրընկալը :

—Ո՛չ... պարզապէս ենթադրութիւն մըն
էր ըրածս :

—Լա՛ւ, պատասխանեց Պ. Ֆրիտրիքսըն
տեսնելով իր խօսակցին խռովումը, եւ ա՛լ չի
պնդեց իր հարցման վրայ : Կը յուսամ թէ,
յարեց, մեր հանքաբանական հարստութիւն-
ները աչքէ չանցուցած չպիտի մեկնիք հոսկից :

—Անտալակոյս, պատասխանեց մօրեղ-
բայրս, բայց քիչ մը ուշ մնացի. գիտուննե-
րը ասկէ անցած են կարծեմ, այնպէս չէ՞ :

—Այո՛, պարոն Լիտէնպրօք, ՊՊ. Օլաֆ-
սընի եւ Բօվէլսընի աշխատութիւնները, ու-
րոնք թագաւորին հրամանով կատարուեցան,
ու Պ. Թրօյլի ուսումնասիրութիւնները, ՊՊ.
Կէմառի եւ Ռօպէրի գիտական պաշտօնները
«Ռըշէլը» ֆրանսական գորվէդով, եւ վերջերս
գիտուններու ըրած հետազոտութիւնները
«Ռէէն-Հօրթանս» մարտանաւին, մեծապէս
նպաստած են Իսլանտայի ծանօթացման :
Բայց, հաւտացէ՛ք որ դեռ չատ բան կայ
անծանօթ մնացած :

—Ձեր կարծիքն ա՛յս է, հարցուց մօրեղ-
բայրս, պարզամիտ մարդու մը պէս, ջանա-
լով իր աչքերուն շողիւնը մեղմել :

—Այո, քանի՛ քանի՛ հետազոտութեան
կարօտ լեռներ, սառնարաններ ու հրաբուխ-
ներ կան, որոնք ա՛յնքան քիչ ճանչցուած
են : Շատ հեռուն չերթանք, տեսէ՛ք հորի-
զոնին վրայ բարձրացող սա լեռը. Սնէֆէլտն է :

—Ա՛հ, ըրաւ մօրեղբայրս, Սնէֆէլտը մի :

—Այո՛, ամենէն հետաքրքրաշարժ հրա-
բուխներէն մին, որուն խառնարանին վրայ
չատ քիչ հետազոտութիւններ կղած են :

—Մարա՞ծ է :

—Այո՛, հինգ հարիւր տարիէ ի վեր :

—Շատ լաւ, յարեց մօրեղբայրս, կատա-
ղօրէն ծունկերը խաշածելով, որպէս զի
վեր չցատկէ. կը փափաքեմ իմ ուսումնասի-
րութիւններս Սնէֆէլտէն... Ֆէսէլէն սկսիլ,
ի՛նչպէս ըսիք :

—Սնէֆէլտ, յարեց Պ. Ֆրիտրիքսըն :

Սոսակցութեան այս մասը լատիներէն
լեզուով եղած էր. ամէն բան հասկցած՝ հա-
զիւ հազ կարող էի ինքզինքս բռնել, տես-
նելով մօրեղբօրս լիազիւ գոհունակութիւնը,
գոր միամիտ կերպարանքի մը տակ կը ծած-
կէր, ծերուկ սատանայի մը ծամածուռ դէմքն
առած :

«Այո՛, յարեց, ձեր խօսքերուն վրայ՝
վերջնական որոշումս տուի՝ Սնէֆէլտը ելլե-
լու փորձ մը ընելու, նոյն իսկ իր խառնա-
րանը ուսումնասիրել :

—Կը ցաւիմ որ, պատասխանեց Պ. Ֆրիտ-
րիքսըն, գրադումներս չեն ներեր ձեզ ընկե-
րակցելու. եթէ ոչ հաճոյքով պիտի գայի
ձեզի հետ, բան մը որ ինծի ալ մեծապէս
օգտակար պիտի ըլլար :

—Օ՛հ, ո՛չ, պատասխանեց մօրեղբայրս
աշխուժով. չենք ուզեր ո՛չ ոք անհանգիստ
ընել. բոլոր սրտանց շնորհակալ եմ ձեզի. ի-
րաւ է թէ ձեզ նման գիտունի մը ներկայու-
թիւնը օգտակար կրնայ ըլլալ, բայց ձեր
գրադումներն ու պարտականութիւնները...

Սպէկ գիտեմ որ մեր հիւրընկալը՝ իր խ-
լանտական անմեղութեամբը՝ չհասկցաւ մօր-
եղբօրս խոշոր չարածճիւղութիւնները :

(Շարունակ)

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
ԹԵՅԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ

Ձինական, Հնդկական և Ճարոնական
ամենաընտիր տեսակէ եղող արտադրու-
թիւնները պիտի գտնէք ապահովաբար
վերոյիշեալ պատուաւոր վաճառատան
մէջ անհամեմատ աժանութեամբ:

Գաւառներու համար, յանձնարարու-
թիւնները փութով և ճշգիւ կը կատա-
րուին:

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, ճէլալ
Պէյ խանի տակ, թիւ 10. սոյն վաճա-
ռատան ապրանքները ժողովուրդէն դը-
նահատուած ըլլալով, շատեր անոնց
կեղծը հրապարակ հանած են. ուստի
զգուշանալու համար, վերոյիշեալ վա-
ճառանիշին տակ Կ. Եավրուեան և Յ.
Իսագուլեան ստորագրութիւնը փնտռե-
ցէք:

ԳԱՂ. ՀԱՅ. ԳՈՐԾՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՑ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ. Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Աշխարհիկ լեզուով՝ ընդարձակ բացա-
տրութիւններ կու տայ ընդհանուր գի-
տական, բժշկական, երկրագործական և
այլ կարեւոր նիւթերու վրայ:

Մինչեւ տպագրութեան լաւարտիլը՝
բաժանորդագրութիւնը 10 ֆրանք է.
թղթատարութեան ծախքով 12.50 ֆր.:

Բ Ա Ռ Գ Ի Ր Ք
ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ
Ե Ի

ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Յ օ ր ի ն ե ց

Հ. Մանուէլ Վ. Քաջուհի

Գին 60 ֆրանք

Վերոյիշեալ երկու բաւարանները կը
յանձնարարուին ամէն անոնց, որք կը
զբաղին գրականութիւնով և գիտու-
թիւնով: Խմբագրութիւնս կ'ստանձնէ
կանխիկ վճարուած յանձնարարութիւնք:

ԵԹԷ ՈՏՔԻ ԿՈՇՏԵՐԷ
(ՆԱՍԸՐ) ԿԸ ՆԵՂՈՒԻՐ

Դիմեցէք առանց երկմտելու, Գում-
Գափու Զարիֆեան գեղարանը, ուր պի-
տի ստանաք 5 դահեկանի փոխարէն,
փոքրիկ սրուակի մը մէջ, Ա. Զարիֆ-
եան էֆ. ի հնարած «Հակակոչտային»
հեղուկը՝ բացատրութիւնով մէկտեղ:

Գաւառներէ ուղղորդուող կը զրկուի
թղթատարով:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ-ՉՅՐԳՏԱՐԻ, ԿԻՍԱՄԱԹԵՐԹ
ազգային, Գրական և Քաղաքական Խմբագիր-Տնօրէն
Մ. Մամուրեան, - Տարեկան կանխիկ 80 դրշ կամ 17
ֆրանք, Ուսուցիչներու համար 60 դրշ կամ 13 ֆրե-
Հասցէ՝ Մ. Մամուրեան, Խզմիր:

ԲԱԶՄԱՎԵՊ—57րդ տարի, ամսաթերթ, Հայ մատե-
նագրական, ստուգարանական, պատմական, քերական-
նական, աշխարհագրական, հնախօսական, և ընդհանուր հա-
րեկան կանխիկ, 10 ֆրանք:

Հասցէ՝ Rédaction de la Revue "Bazmavep",
St. Lazare Venise (Italie)

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՑ — 13րդ տարի, ամսաթերթ.
Հայ-գրական յօդուածներէն զատ ճշտիւ տեղեկութիւն
կու տայ Հայ. գրականութեան, Պատմութեան եւ ընդ
նկատմամբ, ամէն ամիս նոր հրատարակութեանց վը-
րայ և ընդհանուր հարեկան կանխիկ 10 ֆրանք:

à la Rédaction de la Revue "Hantess",

VII^e 2 Mechitharistengasse 4.
Vienne (Autriche)

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Հանրագիտակ կը հրատարակուի առ այժմ շաբաթը անգամ մը. իր նպատակն է գիտութիւնները ռամկացնել, եւրոպական արհեստներու, արուեստներու, ճարտարարուեստներու, երկրագործութեան եւն. դրութիւններն ու նորութիւնները ծանօթացնել գործնական բացատրութիւններով:

Հանրագիտակ՝ իր յառաջդիմութիւնը ժողովուրդին յառաջդիմութեան մէջ, իր իսկական շահը՝ հանրութեան մէջ փնտռել՝ իրեն միակ նպատակ ըրած ըլլալուն, հաստատած է հարց-պատասխանի դրութիւն մը, որու օգտակարութիւնը փորձով հաստատած են մեր յարգոյ բաժանորդները:

Հանրագիտակ կը պատասխանէ գլխաւորաբար այն ամէն օգտակար հարցումներու, որոնք կը վերաբերին երկրագործութեան, Անասնաբուծութեան, Արհեստագիտութեան, ճարտարարուեստի, Առտին տնտեսութեան և իրենց յարակից ճիւղերուն:

Եթէ տրուելիք պատասխանները թերթիս պարունակութեանց մաս կազմեն, որոցմէ հանրութիւնը և երկիրը կրնայ օգտուիլ, խմբագրութիւնս ու է փոխարինութիւն չի պահանջեր:

Ուղղուած հարցումներու մէջէն, ամենէն առաջ կը պատասխանուի անոր, որ հանրային շահուն հետ անմիջական կապակցութիւն ունի. մնացեալներուն կը պատասխանուի յարմարագոյն առթիւ:

Կը պատասխանուի մի միայն այն հարցումներուն, որոնք կ'ուղղուին Հանրագիտակի Պատ. բաժանորդներու կողմէ:

Տրուած պատասխանները չահեկան և օգտակար կերպով ներկայացնելու համար, ուղղուած հարցումներու կարե-

ւորներուն մանրամասն և գործնական բացատրութիւններ կը տրուին, որ կըրնայ երբեմն յապաղում պատճառել, բայց վերջապէս ուշ կամ կանուխ կը պատասխանուի: Այս պատճառաւ պէտք չէ մենէ անմիջական պատասխան խնդրել:

Անոնք որ իրենց զբաղումին վերաբերեալ ու է հարցում կ'ուղղեն խմբագրութեանս, և կ'ուզեն պատասխանը միայն իրենց վերապահել, պէտք է մասնաւոր սակարկութեամբ, և հարցումի կարեւորութեան համեմատ վճարում մ'ընեն:

Եթէ պատահի հարցում մը, որ թերթիս ծրագրէն դուրս ըլլայ, և պատասխանը ստանալու համար մասնագէտներու կարծիքին պէտքն զգացուի, ծախքը՝ և այդ մասնագէտներու պահանջած փոխարինութիւնը պէտք է ընէ՝ հարցատէրը:

Հանրագիտակ կ'ընդունի այն ամէն անձանց աշխատակցութիւնը, որոնք թերթիս ուղղութեան համաձայն հանրօգուտ յօդուածներ կը զրկեն:

Իր աշխատակիցներուն կը նուիրէ առ այժմ թերթ մը. թերթին յառաջդիմութեան հետ մտադիր է նաեւ դրամական փոխարինութիւն ընել ապագային:

Հանրագիտակ իր բաժանորդներու կողմէ եղած յանձնարարութիւնները կը կատարէ. եթէ փոխարժէքը կանխաւ յանձնարարութեան հետ զրկուի:

Հանրագիտակ կ'ընդունի ամէն տեսակ ծանուցումներ և ազդարարութիւններ, խիստ դիւրամատչելի պայմաններով:

Հեղինակներ և հրատարակիչներ, որք կ'ուզեն արժանապէս գրադատուիլ կամ գնահատուիլ, պարտին 3 ական օրինակ զրկել խմբագրութեանս իրենց գործերէն: